Պ . Ասր արարած : թ Կորնլ . ե . 17 :  
Գալճ . դ . 15 : Եկա . դ . 23 , 24 : Կոր .  
դ . 10 :

Ն . Ի՞նչպէս կըսէ Առւրբ Գիրքին մէջը նո-  
րէն ծնանելու համար :

Պ . “ Ասրէն ծնած ” . “ ողիէն ծնած ” .  
“ Աստուծմէ ծնած ” : Յօհ . առ . 13 : դ . 1—9:  
ա Պետք . առ . 23 :

Ն . Հ իմայ անիկա ո՞րին որդին է :  
Պ . Աստուծոյ որդին : Հայով . թ . 14—17 :  
Ն . Եւ ո՞ւր կերթակոր :  
Պ . Երկինքը : Հայով . ե . 1 , 2 : թ .  
1 , 28 :

Ն . Ի՞նչպէս կընաս հասկընալ թէ մէկը ի՞ս-  
կապէս փոխված է :

Պ . Իր բռնած ճամբայէն : Աշտալ . է .  
16—27 : Յօհ . թ . 51 :

Ն . Ասր սիրտ ունենալէն աստաղ ի՞նչպէս  
կեանք մը կըվարէր :

Պ . Չար կեանք : Հայով . է . 18 : Գալճ . ե .  
19—21 :

Ն . Եւ նոր սիրտ մը ունենալէն ետքը ի՞նչ-  
պէս կեանք մը պիտի վարէ :

Պ . Արդար կեանք մը : Աշտալ . ե . 14—16 :  
ժդ . 23 :

Ն . Երբոր Հոգին փոխէ մեր սիրտերը , ան

ատենը մեղ կատարելապէս սուրբ կընէ՞ մի , աւ  
նանկ՝ որ մենք բնաւ մէյ մըն ալ չի մեղանչենք  
որչափ որ ապրելու ըլլանք :

Պ . Ջէ : Յակ . դ . 2 : ա Յօհ . ա . 8 :  
Հապա երբոր մեր սիրտերը փոխէ , անատենը  
մեղ սուրբ բնելու միայն կըսկսի : ա Կորնէ . թ .  
24—27 : Փիլու . ա . 6 : Եբր . ժդ . 20 , 21 :

Հ . Ուրեմն Հոգին պարտի՞ մեղի չետ մնալ  
ու մեր մէջը սկսած բարի գործը լմնցունել , մեղ  
բարի ու էվելօք բարի բնել քանի որ կապրինք ,  
և այնպէս մեղ Երկինքին չամար պատրաս-  
տել :

Պ . Հրամերես : Այտ . դ . 18 : Արագնէ .  
ժդ . 31—33 : Հառնէ . ը . 11 : ա Կորնէ . դ . 16 :

Հ . Անանկ է նէ որին օրչնութիւն ու փառք  
պիտի տանք մեր սրբութեանը ու Երկինքին չա-  
մար պատրաստութեանը վրայով :

Պ . Սուրբ Հոգիին :

Աեր Փրկիչը կըսէ , “ Օձէ որ մէկը նորէն  
չի ծնի նէ , չի կընար Աստուծոյ Օժագաւորու-  
թիւնը տեսնալ ” . “ Դուք պարտիք նորէն  
ծնանիլ ” :

1 . Առանց սրտի փոփոխութեան մենք բնաւ  
Երկինքը չենք կընար մտնալ :

Աստուած՝ Արբութեան Աստուած է՞ մի .  
Ուրեմն չարերը պիտի վոնտէ իր ներկայութե-  
նէն . ինքը Շշմարտութեան ու Արդարու-  
թեան Աստուած է՞ մի . ուրեմն պիտի պատժէ  
չարերը յաւիտեան դժոխքին մէջը . Երկինքը  
Արբութեան՝ ու Աստուծոյ չետ չաղորդու-  
թեան տեղ է՞ մի . ուրեմն չարկաւոր է Արբու-  
թիւնը ան ամէնուն՝ որոնք որ հոն պիտի եր-  
թան : Աեղաւորը չի կընար Աստուծոյ չետ  
չաղորդութիւն ունենալ , ոչ ալ սուրբերուն  
ու հըեշտակներուն չետ . անիկա Երկինքը

վայելելու հաճութիւն չի պիտի ունենայ : Ինքը պիտի զգայ թէ բուն իր սեփիչական երկինքը չէ : Հատերը՝ որ սրտի փոփոխութիւն չունինին, կըսեն թէ երբոր մեռնին նէ կուղեն Երկինքը երթալ, չէ թէ Երկինքը սիրել նուն ու անիկա վայելելու յարմարութիւն ունենալնուն համար, հապա Դժոխքէն ազատելնուն համար : Բայց թէ որ երկինքը մտնալու վճռված ըլլային ալ նէ, թշուառական պիտի ըլլային հոն իրենց մեղսալից ու անհաւատութեան հին սիրտերովը :

2 . Ծմանդ աս աղէկ մտմտան անոնք որ տակաւին փոխված չեն . թէ որ ասանկ վիճակի մը մէջ մնալով մեռնին նէ, պարտին իջնալ վար բուն իրենց սեփիչական տեղը :

Յիշեցէք որ եթէ աս աշխարհիս մէջ չի փոխվիք նէ, բնաւ ամենեին ալ փոխվելու չէք . Յոյտ . իթ . 11 : Դուք չէք գիտեր թէ երկար ատեն ապրելու էք՝ թէ կարճ . ուրեմն իմաստուն եղիք ու շուտով սկսեցէք և ինքրզինքնիդ անհոդ մի՛ թողուք, մինչեւ որ ան մեծ ու երջանիկ փոփոխութիւնը ստանաք :

3 . Վա փոփոխութիւնը ճշմարտապէս մեծ ու երջանիկ փոփոխութիւն մըն է : Վեղաւորը մէծ փոփոխութիւն մը կրզգայ խաւարէն դէպի զարմանալի լոյսը . ատելութենէն դէպի սէրը . մեղքէն դէպի սրբութիւնը . Աստանայէն դէպի Վստուած . Դժոխքէն դէպի Երկինքը . և արդարեւ կրնամ ըսել թէ Վստուծոյ որդին կըլլայ անիկա Յիսուս Քրիստոսի հաւատքովը :

4 . Վա սրտի փոփոխութիւն յայտնութիւնը կեանքի փոփոխութիւն մըն է :

Այսոր սիրտ մը նոր կեանքի մը կառաջնորդէ . մեղաւորը՝ չէ՛ թէ ինչ որ առաջ էր, անանկ կըմնայ, հապա նոր արարած մը կըլլայ . մեղքին ու յիմարութեան բոլոր հին ճամբա-

Ները մէկ դի կըձգվին , և անոնց տեղը աղօթքը՝  
օրհնութիւնը՝ հաւառքը՝ և սէրը՝ ու սուրբ հնա-  
զանդութիւնը որ նոր բաներ են , կուգան : Եւ  
անիկա որչափ որ փորձութիւններ ու նեղու-  
թիւններ քաշելու ըլլայ , Վատուծոյ Հոգիին  
օգնութիւնովը այնչափ էվելօք լաւ կերպով կը  
յառաջանայ . իր շաւիղը քիչ քիչ էվելնալով  
պայծառ կըլուսափայլէ մինչև որ կատարեալ  
կըլլայ կէս օրփան լուսին պէս , երբոր պիտի  
տեսնայ զ Վատուած փառքով . և ով որ աս կեր-  
պով չի յառաջանար առաքինութեան ճամբա-  
յին մէջ նէ , անոր փոփոխութիւնը ճշմարիա  
չէ :

5. Յրիստոնեանները բնաւ մոռնալու չեն որ  
միայն Առւրբ Հոգիին շնորհքովը և օգնու-  
թեամբը կընան յառաջանալ դէպի երկինք երթա-  
լու ճամբուն մէջ . ատ նոյն շնորհածիր ու կա-  
րող Հոգին՝ որ բարի գործը կսկսի մեր մէջը ,  
պէտք է որ առաջ տանի ու կատարէ ան :  
Օգուշանանք ուրեմն Առւրբ Հոգիին դէմ հա-  
կաւակելէն ու զինքը վշտացունելէն :

Ուշ որ ինքը հեռանայ մենէ . ամէն բան  
խաւար ու մեղք՝ թշուառութիւն ու մաչ է մե-  
զի :

3 Առաջին Հոգին Առաջին Վատուածու-  
թիւննով :

Վաղ . ԺՇ . 1—14 :

Հ . Ար Գիրքին մէջը Առւրբ Հոգին կըխօսի  
մեզի , ու կըսէ մեզի թէ մենք մեղաւոր ենք , և  
թէ Երկինք ու Դժոխք կայ , և թէ Յրիստոս  
մեռաւ մեղ փրկելու համար , և թէ մենք պար-

ախնք նոր սիրտ ունենալ , չենէ Երկինքը չենք  
կրնար մտնալ :

Պ . Առւրբ Աստուածաշունչին մէջը :

Ն . Ինաւ կրնայի՞նք մի գիտնալ աս մեծ  
ճշմարտութիւններուն մէկը , մէկ որ Աստուածա-  
շունչը չունենայինք նէ :

Պ . Ուէ :

Ն . Աստուածաշունչն է մի ան Գիրքը՝ որն  
որ Առւրբ ողին յատկապէս մեր օգնութին ու  
մեր Փրկութեանը համար գրվելու պատճառեց :

Պ . Արամերես : Ք Տիմ . դ . 16 : Ք Պետ .  
ա . 21 :

Ն . Որին խօսքն է Առւրբ Գիրքը . մարդոյ՝  
մէ Աստուածոյ :

Պ . Աստուածոյ . “ Են ամէն գիրքերը Աստու-  
ածոյ շունչն են , և շահաւոր սորվեցունելու հա-  
մար , յանդիմանելու համար , շրտկելու համար ,  
ու արդարութեան խրատելու համար ” : Ք Տիմ .  
դ . 16 :

Ն . Պօղոս ի՞նչ կըսէ Տիմոթէոսին՝ Առւրբ  
Գիրքին վրայով :

Պ . “ Դուն մանկութենէ Առւրբ Գիրքերը  
գիտես , որոնք կրնան քեզ իմաստուն ընել  
փրկրվելու Վրիտոսոս Յիսուսի վրայ եղած  
հաւատքով ” : Ք Տիմ . դ . 15 :

Ն . Պետրոս ի՞նչ կըսէ Աստուածաշունչը  
գրողներուն վրայով :

Պ . “ Առւրբ ողին շարժըված Աստուած-  
մէ եղած մարդիկները խօսեցան ” : Ք Պետ .  
ա . 21 :

Ն . Եւ Առւրբ ողին ըսա՞ւ մի անոնց ինչ  
գրելնին ու ինչ խօսելնին , և միշտ անոնց չետ  
է՛ր մի անոնք սխալ ընելէն պահելու համար :

Պ . Արամերես : Յօհ . մդ . 16 , 17 , 26 :  
մէ . 26 : մդ . 13 , 14 :

Ն . Փրկրվելու ուրիշ ճամբայ մը կայ մի ան

Ճամբայէն 'ի զատ , որնոր Առւրբ Հոգին կիմացունէ մեղը :

Պ . ՀԵ : Յօհ . Ե . 39 : Գարծ . դ . 12 :

Հ . Եր փրկըլելուն համար յոյս մը կայ մի թէ որ չի հաւատանք կամ անարդենք Կատուածաշունչը , ու անկեց խրատ ընդունելէն ետ կենանք նէ :

Պ . ՀԵ : Պ . առ . ժկ . 29—31 : Եբր . Ժ . 28—31 :

Հ . Երբոր մեր Հոգիներուն փրկըլելուճամբան գիտենք , պէտքը չէ՞ մի որ ուրախութեամբ անոնց փրկութեանը ջանանք :

Պ . Հրամերես :

Հ . Երբոր գիտենք թէ Առւրբ Հոգի մը կայ՝ որ կրնայ առաջ տանիլ մեզ ատ փրկութեան մեծ ու երևելի գործքին մեջը , պէտքը չէ՞ մի որ անոնց փրկըլելուն ուրախութեամբ հոգ տանիք :

Պ . Հրամերես :

Հ . Գիցուք թէ չի ջանանք , կամ չաղաւենք զ Կատուած Առւրբ Հոգին համար որ մեր սիրտերը փոխէ ու մեզ դէպի Վրիստոս տանի նէ , ի՞նչ պիտի ըլլայ մեզի :

Պ . Պիտի կորսրվինք : Առ . ա . 24—27 :

Հ . Երբոր մէկը Վրիստոնեայ կըլլայ , Առւրբ Հոգին ի՞նչ գերքով կըզգուշացունէ և կըքաջալերէ անիկա ու կըսորվեցունէ անոր բոլոր իր պարտաւորութիւնները :

Պ . Առւրբ Կատուածաշունչով : Առաջ . ժը . 7—11 :

Հ . Ուրեմն Կատուածաշունչն է՞ մի ան Վիրքը որնոր մենք պարտինք սիրել և սորվել ու չնազանդիլ անոր բոլոր մեր կենացը մէջ :

Պ . Հրամերես : Յես . ա . 8 : Առաջ . ա . 1—3 :

Հ . Եւ մեր բոլոր կենացը մեջը ո՞ր Հոգին

կըկարօտինք՝ որ մեզի սիրցունէ Աստուածաշունչը  
և սորվեցունէ և հնազանդեցունէ անոր :

Պ. Առւրբ Հոգին : ա Կո՞նկլ . թ . 12—16 :

Առւրբ Հոգին մեզի հետ կըխօսի Աստուածա-  
շունչը , որնոր Իրմէն ընտրված սուրբ մար-  
դիկներէն գրվեցաւ . ու անոնք իրմէն այնչափ  
սորված և օգնութիւն ընդունած էին ան գրելու  
համար՝ որ Աստուածաշունչը Աստված Հոգին ճիշտ  
ու պահանջն աղես եղաւ : Ան կատարեալ է . ան է  
միայն ու ամենաբաւական կանոնը հաւատքին .  
ան հաւատալու և ընելու բաները մեզի կըսորվե-  
ցունէ . ան Աստուծոյ խօսքն է :

1. Անք ամենէն էվելի պատուելու ենք Աստ-  
ուածաշունչը . որ ամենագերազանց Գիրք մըն է .  
ամեն ուրիշ գիրքերը՝ մարդոցմէ եղած գիրքեր  
են , բայց աս Գիրքը Աստուծմէ եղած է . որնոր  
զ Աստուած ու Հաւիտենականութիւնը աչքի  
առջև կըրերէ : Ան կըսորվեցունէ մեզի բուն  
մեր անմահութիւնը և մեր փրկը վելու ճամբան .  
ան է կենաց Գիրքը : Ուր որ Աստուածաշուն-  
չը ճանշցրված է և կըկարդացվի ու կըքարողվի ,  
և կըհաւատան ու կըհնազանդին անոր նէ , չոն  
կայ գիտութիւն ու սրբութիւն խաղաղութիւն  
ու յաջողութիւն : Ուր որ չէ նէ , չոն կայ տգի-  
տութիւն ու մոլութիւն խոռվութիւն ու կործա-  
նումն : Ուստի Աստուածաշունչը շատ հար-  
կաւոր է մեզի :

2. Անք պարտինք ընդունել Աստուածա-  
շունչը մեր մի միայն ու ամենաբաւական կանոնին  
պէս հաւատոյ ու գործածութեան . հաւատալու  
համար ամեն ինչ որ Առւրբ Հոգին կըսէ մեզի  
ատ Գիրքին մէջը նէ , մենք պարտինք հաւատալ .  
ամեն ինչ որ ինքը կըսէ մեզի ատ Գիրքին մէջը  
ընելու նէ , մենք պարտինք ընել : Ուէ որ մէկը  
Աստուածաշունչին հակառակ հաւատք ունենայ

կամ սորվեցունէ կամ քարողէ կամ գործէ նէ ,  
անիկա սխալ կըհաւատայ և կըսորվեցունէ ու կը  
քարողէ և կըգործէ : Եմէն մէկ զգացումներուն  
և գործքերուն ուղիղ ու սխալ ըլլալը Եստուա-  
ծաշունչով պիտի քննըիլի :

3 . Ի՞այց ի՞նչ օդուտ պիտի ընէ մեզի աս  
Դիրքը , թէ որ մենք զգուշութեամբ անոր չե-  
ցետեինք ու անկից ընդունելու խրատներուն  
պատեհութիւնները անհոգութեամբ կորսընցու-  
նենք : “Քննեցէք Դիրքերը” կըպատուիրէ  
մեզի գրկիչը :

Փրկութեան ճամբան թէպէտև այնչափ դիւ-  
րին ու պայծառ է Եստուածաշունչին մէջը որ  
պղտի տղաքներն ալ կրնան սորվիլ , բայց Եստ-  
ուածաշունչը իր բարձրութիւնովը ու խորուն-  
կութիւնովը բոլոր գիտութիւններէն գեր ՚ի վե-  
րոյ է : Թէ որ մարդիկ բոլոր իրենց կեանքեր-  
նուն մէջը անոր հետեին , թէ որ մինչեւ վերջին  
կէտը անոր պարապին , բայց տակաւին գիտ-  
նալու բաներ պիտի մնան : Են Եստուածայ  
Դիրքն է :

Եւ ի՞նչ օդուտ պիտի ըլլայ մեր ժրաջան պա-  
րապմանը և անկից ընդունած կրթութեանը ,  
թէ որ խոնարհութեամբ ու հեզութեամբ չե-  
կարդանք նէ անիկա . ասոր համար աշխատինք  
ու ասոր համար ազօթենք : Յօհ . է . 17 :

4 . Ճշմարիտ Վրիստոնեաները էվել էվելօք  
կըսիրեն Եստուածաշունչը որչափ որ կապրին :  
Ատղ . Ճ՛ը . 97—104 ևն : Եւ որչափ երկար  
որ ապրին , այնչափ էվելօք կըզգան իրենց Առւրբ  
Հոգիին կարօտ ըլլալը Առւրբ Դիրքը իմանալու  
ու անոր հնազանդելու համար :

5 . Եւ գիտնալով հիմայ՝ որ Եստուածաշուն-  
չով միայն կորսրված մարդիկը Փրկութիւն  
կըդանան , կըփափաքին որ ամէն մարդիկ Եստ-  
ուածաշունչը ունենան , ու կըջանան որ ան՝ ա-  
նոնց տան :

Անոնք՝ որ Աստուածաշունչը իրենց ընկերներէն պահել կուղեն, Աստուծոյ ու մարդոց թշնամիները են. Աստուածաշունչը ստուգիւ ամէն մարդու կրվերաբերի. ու բոլոր աշխարհի համար գրվեցաւ:

6. Անոնք որ Աստուածաշունչը Աստուծոյ խօսքը ըլլալ չեն ընդուներ ու ծաղը կը նեն ան, չեն պարապիր չեն հաւատար և չեն հնազանդիր անոր, պիտի կորսրվին յաւիտեան, թէ որ աս որածներնուն վրայ չապաշխարեն նէ:

4. Խորբ Հագեցն ան ըլլալ :

Յօհ. ԺՂ. 15—31:

։ Ո՞վ է Սուրբ Հոգին:

Պ. Անիկա Աստուած է. ինչպէս որ կը խոստովանինք Ամենասուրբ Երրորդութիւնը այր՝ Որդի՝ և Սուրբ Հոգի իրեք անձն ու մէկ Աստուած:

։ Ի՞նչպէս գիտէք թէ ինքը Աստուած է:

Պ. Աստուածաշունչը ասանկ կը սէ մեզի:

։ Աստուածաշունչին մէջը անիկա Աստուած կը կոչվի՞ մի:

Պ. Հրամերես: Գաղթ. Ե. 3—4: թ Տէ. Պ. 16:

։ Անք չե՞նք մի մլրտրվիր Սուրբ Հոգիին անունով՝ ինչպէս Հօրը ու Որդիին անունովը:

Պ. Հրամերես: Առարթ. իշ. 19:

։ Երբոր կարձը կեն ժողովուրդը եկեղեցին նէ, ի՞նչ կը սեն:

Պ. Օքչնեալք եղերուք ՚ի շնորհաց Սուրբ

Հոգւոյն, երթայք ՚ի խաղաղութիւն, և Տէր  
 Յիսուս եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսին, ամէն  
 ։ Եստուած միայն գիտէ ամէն բաները,  
 Առւրբ ոգին ալ գիտէ<sup>○</sup> մի ամէն բաները:  
 Պ. Հրամերես:  
 ։ Ենչ կըսէ Առւրբ Գիրքը ասոր վրայով:  
 Պ. “Հոգին ամէն բան կըքննէ”, Եստուծոյ  
 Խորունկ բաներն ալ” : ա Կորնլ. թ. 10 :  
 ։ Եստուած միայն գիտէ գալու բաները,  
 Հոգին ալ գիտէ<sup>○</sup> մի:  
 Պ. Հրամերես: Եսայ. խղ. 9, 10: Յօհ.  
 ժղ. 13:  
 ։ Եստուած միայն ներկայ է ամէն տեղ,  
 Հոգին ալ ամէն տեղ ներկայ է մի:  
 Պ. Հրամերես: Յօհ. դ. 3—6: ժղ. 7, 8:  
 ա Կորնլ. դ. 16: դ. 19: թ. Կորնլ. թ. 16:  
 ։ Եստուած միայն Եմենակարող զօրու-  
 թիւն ունի, Հոգին ալ Եմենակարող զօրու-  
 թիւն ունի<sup>○</sup> մի:  
 Պ. Հրամերես:  
 ։ Եռաքեալները ո՞րին զօրութիւնովը հրա-  
 շադործութիւններ ըրին:  
 Պ. Առւրբ Հոգիին զօրութիւնովը: ա Կորնլ.  
 ժբ. 8—11: Եբբ. թ. 4: Գործ.  
 թ. 4. եկ:  
 ։ Ո՛էկ մեղք մը կայ՝ որնոր Եստուած  
 բնաւ չի պիտի ներէ, ու աններելի կըկոչվի.  
 ի՞նչ է ան:  
 Պ. Առւրբ Հոգիին դէմ եղած հայհոյու-  
 թիւնը: Առարլ. ժբ. 24—32: Պ. ս-կ. ժբ.  
 10: Առարլ. դ. 22—30:  
 Առւրբ Հոգին որ կըփոխէ մեր սիրտերը,  
 մեղ Քրիստոսին կըքաշէ, ու Երկինքին հա-  
 մար կըպատրաստէ, չէ թէ ինքը ուրիշ մէկն է  
 այլ Եստուած, երկրպագելի Երլորդութեան  
 երրորդ անձը:

1. Ուստի մենք վախնալու՝ սիրելու՝ երկրպաշտութիւնը ընելու ու ծառայելու ենք Իրեն՝ Աստուծոյ պէս :

Խնքն է որ շինեց Աստուծածաշունչը, Աստուծոյ Գիրքը, ու ըսաւ մեզի ատ Գիրքին մէջը ամէն եղած բաները ու գալու բաները մինչև աս աշխարհիս վերջը, ան ամէն բաները որ մենք պարտինք հաւատալ ու ընել մեր փրկութեանը համար : Խնքն է որ Ա'արդարէներուն ու Առաքեալներուն ձեռքովը զօրաւոր հրաշքներ գրեց : Խնքն է որ աշխարհի ամէն կողմերը ներկայ է նոյն րոպէին, մարդոց մեղքերը յանդիմանելով, անոնց սիրտերը փոխելով, անոնք դէպի Քրիստոս առաջնորդելով, Քրիստոնեաներուն սիրտին մէջը բնակելով իրենց սրբութեանը համար, Պատօննեաներ սահմանելով ու զօրացուցանելով, և Եկեղեցիներուն հոգ տանելով : Հոգիին մէջ բոլոր լիութիւնները կըբնակին :

2. Իր սեփիշական գործն է մարդոց սիրտերը փոխել ու սրբել :

Վենք չենք կընար փոխել բուն մեր սիրտերը, ինչու որ բոլորովին մենք չար ենք, ու մեր սիրտերը միշտ չարութիւն ընելու հաստատեն : Վենք զգալով մեր տկարութիւնը ու չարութիւնը՝ պարտինք Իրեն երթալ յատուկ աս դիտաւորութեանը համար : Աշխարհի դէպի Քրիստոս դառնալու բոլոր յոյսերը Աստուծոյ Հոգիին հոսանեն կախում ունի :

3. Վենք ամէն պէտք եղածը ընելու ենք Աստորք Հոգին հրաւիրելու ու մեր ներսիդն ունենալու համար, և բան մը ընելու չենք զինքը մենէ հեռացունելու համար :

Կարելի է որ ինքը իր սրբազան ներգործութիւնը մեր սիրտերէն դադրեցունէ, կարելի է որ ինքը վշտանայ ու մենէ մէկ դի քաշվի

յաւիտեան : Ուրեմն չուրանանք իր Աստուածութիւնը ու իր Ամենակարող զօրութիւնը , անարդական կերպով երդում չընենք իր անունովը , չանարգենք իր խօսքերը՝ իր պաշտօնեաները՝ և իր ժողովուրդը : Իր կամքին դէմ եղածը չընենք . ինքը չի կրնար մէկ կերպով մը մեղքին չետ հաղորդութիւն ունենալ :

4 . Ինքը բարեգութ ու երկայնամիտ է դէպի մարդոց :

(Ճ) որ ինքը մարդասէր ու երկայնամիտ չըլլար , բնաւ չէր բնակէր աս գէշ աշխարհին մէջը , բնաւ չէր բնակէր ասանկ ապականեալ տեղ մը , այսինքն մարդոց սիրտը : Եւ երբոք ինքը շնորհաց գործ մը սկսէ մեր մէջը՝ թէպէտ և մենք մեր սովորական կռնակ դարձունելը ու դժնդակ մեղքերը ընել կուղենք , բայց ինքը կըշամբերէ և իր սկսած գործը չի դադրեցունելով շարունակ յառաջ կըտանի մինչեւ վերջին կէտը : Ինքը Շնորհաց ողի է . ան ողին՝ որուն մեղաւորները կըկարօտին :

5 . Ճշմարիտ Քրիստոնեան ի՞նչպէս զօրաւոր և ի՞նչպէս երջանիկ է : Անոր այրը՝ Աստուած է . անոր Փրկիչը՝ Աստուած է . և անոր Արբարարն ալ՝ Աստուած է . թէ որ Աստուած մեր հետը ըլլայ նէ , ո՞ւ կրնայ մեզի դէմ կենալ :

6 . Բայց չարերը ու անզեղջները անզօր ու թշուառական են . անոնք Երկնաւոր այր չունին . ոչ պատուական Փրկիչ , ոչ ալ բարեգութ Արբարար : Անոնք՝ օր , և Արդւոյ , և ողւոյն Արբոյ հակառակ են . և այրը՝ Արդին՝ և Առւրբ ողին ալ անոնց հակառակ են : Աստուածմէ մեզի համար նախապատրաստը մեծ Փրկութենէն անոնք մասն ու բաժին չունին :

## § Ե. Առահեն ձբայ :

1. Առավմբնին մասնելուն ձբայ :

Յօհ . ժամ . 1—44 :

Ն . Խ<sup>թ</sup>եց է պատճառը՝ որ մենք ամենքս կը մեռնինք :

Պ . Վանդի մենք ամենքս ալ մեղաւոր ենք : Օհն . թ . 17 : Ատով . ձը . 48 : Հասով . Ե . 9 :

Ն . Ուշ որ բնաւ մեղք մը չըլլար աշխարհի մէջ նէ , մաս ալ պիտի ըլլար մի :

Պ . Չէ :

Պ . Գիտէք մի թէ որ ատեն պիտի մեռնիք :

Պ . Չէ :

Պ . Ո՛իայն ո՞վ գիտէ ատենը :

Պ . Աստուած : ա Ատմ . թ . 6 : Յան . Ե . 23 : Գարդ . ժէ . 25—28 :

Ն . Գիտէք մի արդեօք թէ ինչ կերպով մեռնելու էք դուք :

Պ . Չէ :

Պ . Ո՛իայն ո՞վ գիտէ :

Պ . Աստուած :

Պ . Ո՛ենք ընդհանրապէս աս աշխարհին մէջ շա՞տ մի կապրինք՝ թէ քիչ :

Պ . Վիշ ժամանակ : Յան . ժդ . 1 , 2 : Ատով . թ . 5 : Լժ . 5 : Քան . թ . 14 : ա Պիետր . ա . 24 :

Ն . Ո՛եր տեսած ամենածեր անձինքը՝ քանի՞ տարեկանի չափ կան :

Պ . Եօթանասուն կամ ութսուն տարեկանի չափ : Ատով . զժ . 10 :

Ն . Դրչեղեղէն առաջ մարդիկ քանի՞ տարի ապրեցան :

Պ . Ութը կամ ինը չարուր տարի :

Պ . Ո՞վ էր ամենածեր մարդը :

Պ . Վաթուսաղայ : Յօննու . Ե . 1—32 :

Պ . Ինչո՞ւ Աստուած մեր կեանքը կարծեցուց :

Պ . Վեր մեղքին չամար :

Պ . Կային երկու բարի մարդիկ՝ որոնք բնաւ չեն մեռան , Աստուած անոնք աշխարքէն դուրս հանեց և Երկինքը տարաւ : Ի՞նչ էին անոնց անունները :

Պ . Ենովք և Եղիա : Յօննու . Ե . 24 :  
ԵՔՐ . Ժամ . 5 : Ք Յօննու . Ք . 11 :

Պ . Երբ մարդ մը մեռնի նէ , ի՞նչ կընենք անոր մարմինը :

Պ . Հողին մշջը կըթաղենք անիկա :

Պ . Եաքը ի՞նչ կըլայ ան մարմինը :

Պ . Հող կըդառնայ :

Պ . Աղամ մեղանչելէն ետև՝ Աստուած ի՞նչ ըստ իրեն :

Պ . “ Հող էիր և հող պիտի դառնաս ” :  
Յօննու . Ք . 19 :

Պ . Սոսկալի բան մըն է մեռնիլը , ո՞վ կընայ միսիթարել մեղ խաղաղութեամբ մեռնելու :

Պ . Աստուած : Ատու . իԵ . 4 : Յօհ . ԺՂ . 1—3 :

Պ . Ի՞նչ կերպ մահով մեռնելու կըփափակինք :

Պ . Արդարներուն մահովը :

Պ . Որովհետեւ մեր մեռնելուն ժամանակը կամ ինչ կերպով մեռնենիս չենք գիտեր , միշտ ի՞նչպէս ապրիլ պարտինք :

Պ . Վիշտ մահվան պատրաստ ըլլաւով :

Պ . Ի՞նչ կըսէ Յիսուս Փրկիլը ասոր վրայով :

Պ . “ Դուք ալ պատրաստ եղիք , ինչու որ չկարծած ատեննիդ Արդի մարդոց կուգայ ” :  
Դ . ժ . ժ թ . 40 :

Ես աշխարհիս մէջի բոլոր կենդանիները մաշին ենթակայ են , և աշխարհ կաճապարեկոր իր վերջին : Մահը թագաւորեց մարդոց վըրայ Շատամէն մինչև աս օրըս , և պիտի թագաւորեմինչև վերջին ատենն ալ :

1 . Ես ըստածներես մենա կըսորովնեւ Ան ինչ գեշ ու լըզը բան հըն է մեռը . մահը և բոլոր վայերը անիկա բերաւ մեր տոհմին վըրայ . թէ որ մեղք չըլլար , մահ ալ չի պիտի ըլլար . մեղքը ու մահը իրարու հետ կըկապվին :

2 . Դուք մետնելու համար ծնած եք : “ Հող էիր և ’ի հող դառնաս ” կըսէ Եմենակարողը : Ուրեմն մի՛ հպարտանաք ձեր անձին գեղեցկութեանը կամ զօրութեանը կամ առողջութեանը վըրայ : Մի՛ հնազանդիք ատ մարմինին ցանկութիւններուն : Մարմինը ուրիշ բան չէ բայց միայն հող . խոնարհ և խորհրդածու եղիք մահին վըրայ :

3 . Չե՞ գիտե՞ Ան երբ ոլոտի մետնե՞ . այսօր , կամ վաղը , կամ գալ շաբթու կամ ամիսէ մը ետև , կամ տարիէ մը ետև . մահը ձեզ պիտի յափշոակէ : Կարելի է որ ձեր տղայութեան ատենը մեռնիք , կամ մեծ մարդ ըլլալէն ետքը : “ Այեցէք գերեզմաններուն թիւը , և պիտի գտնաք պղտի տղայոց պատանեաց՝ և մեծ մարդոց գերեզմաններ : Անքէն ելելի փոփոխական բան մը չի կայ : Ա աղվան վըրայ դուք ձենէ մի՛ պարծիք , ըսելով՝ վաղը աս կամ ան բանը ընենք ” . “ գալ տարի հոս կամ հոն պիտի երթանք ” . Յու . դ . 13 . 14 : “ Դուք միշտ զգալու և ըսելու էք , “ Եթէ Տէրը կամի նէ , աս կամ ան բանը ընենք ” :

4. Չե՞տ ու գիտե՞ր լնէ ինչ իւրառն ովադի մեռնիք : Հազար կերպ ճամբաներ կան մեռնելու . մահը մեր բոլորտիքը և մեր մէջն է . միշտ միտքերնիդ բերէք որ ձեր կեանքը Ծատուծոյ ձեռքն է , և ինքը կրնայ երկնցունել կամ կարծրցունել անիկա , որ ատեն կամ ինչ կերպով որ ինքը հաճի նէ :

5 Ա-բըն լու'զ յեր իւտերին մեծ գործը ըլլոյ հահեն համար պատրաստ ըլլոյլ : Երբոր մահը խկապէս կուգայ՝ անատենը դուք չի պիտի ըսէք թէ անոր համար շատ ջանքով պատրաստութիւն ըրեր էք , հապա պիտի ըսէք թէ շատ քիչ ըրեր էք : Եւ թէ որ առաջուց սկըսած չէք նէ , չիմայ սկըսեցէք պատրաստիլ : Ո' իտքերնիդ բերէք ան ժամերը՝ որ արդէն կորսընցուցած էք . և ան վտանգը՝ որուն ձեր հոգիները արդէն են թակայ եղած էին : Ծա մեծ դարմանք մը չէ՞ մի որ դուք մինչև չիմայ կտրրված ու յաւիտենական թշուառութեան խրկրված չէք : Ուրեմն մէկ դի մի՛ ձգէք Հոգիին Փրկութիւնը մինչև մահուան օրը . Ծա է մեծագոյն շարութիւնը և յիմարութիւնը : Զեր ամենէն աղէկ ժամանակը ամենալաւ բաներու չետելով անցուցէք : Եւ թէ որ միամիտ սրտիւ ապաշխարէք ու Յիսուսին հաւատաք և իրեն ծառայելու համար ապրիք նէ , դուք պիտի պատրաստ ըլլաք մահին համար , և Ծատուծոյ շնորհքովը մահը քիչ երկիւղ պիտի տայ ձեզի կամ բնաւ չի պիտի տայ :

2. Հագեն նու կըլլոյ Երեսր Աշորինը  
մեռնել :

Պատ. ժղ. 19—31 :

3. Երբոր մարմինը մեռնի ի՞նչ կըլլայ հո-  
գին :

Պ. Անիկա վեր դէպի Վատուծոյ կերթայ :

3. Եւ ի՞նչ դիտաւորութեան համար :

Պ. Վատուած պիտի դատէ անիկա, ու կամ  
Երկինքը պիտի ընդունէ, և կտմ Դժոխքը պի-  
տի խրկէ անիկա՝ իր ինչպէս դանըվելուն նա-  
յելով, թէ աղէկ և թէ գէշ :

3. Աւրեմն բարի մարդ մը մեռածին պէս Եր-  
ջանիկ կըլլայ մի Երկնից մէջը :

Պ. Հրամերէս :

3. Դուք ի՞նչպէս դիտէք աս :

Պ. Վատուածաշունչէն :

3. Մեր Փրկիչը խաչին վրայ ի՞նչ ըստ  
աւազակին :

Պ. “Վայսօր ինձի չետ Դրախտին մէջը պիտի  
ըլլաս” : Պատ. իդ. 43: Դարձ. է. 58:  
Փետ. ա. 21—23: Յօհ. ժղ. 1—3: Պատ.  
ժղ. 22:

3. Գէշ մարդ մը մեռածին պէս դժոխք պի-  
տի երթայ մի :

Պ. Հրամերէս :

3. Վեծատունը մեռնելէն և թաղվելէն ետ-  
քը տանջանքի մէջ ըլլալով ուր բացաւ իր աչ-  
քերը :

Պ. Դժոխքին մէջը : Պատ. ժղ. 23:

3. Յուղան ինքըզինքը կախելէն ետքը, ուր  
գնաց :

Պ. “Բուն իր տեղը” : Դարձ. ա. 25:

Յօհ. ժէ. 12:

Ն . Ուրեմն մենք մեռածնիս պէս՝ մեր հոգին  
ները ուր պիտի դունըվին :  
Պ . Կամ Երկինքը , կամ Դժոխքին մէջը :

Վաշով Հոգին Վարմինէն բաժանված կըմը-  
նայ մինչև Յարութեան օրը : Վարմինը Երկ-  
րի մէջ կըթաղվի և հող կըդառնայ , և հոգին  
դէպի վեր Վատուծոյ կըտարվի , ու կըդատվի .  
և անոր արժանաւորութեանը նայելով կամ  
Երկից մէջ կընդունվի , կամ Դժոխքը կըխրկը-  
վի :

1 . Ասելու յիշանքն է մայն Շնորհաց օրը :  
Օմէ որ չապաշխարենք և Յիսուս Քրիստոսի  
չի հաւատանք քանի որ ասաշխարհիս վրայ ենք ,  
մենք յաւիտեան կորսրված ենք : Հոգին փրկե-  
լու համար պատեհութիւն չի կայ մէկալ աշ-  
խարհին մէջ : Վաշէն ետև դատաստանը կու-  
գայ :

“Վայոր թէ որ անոր ձայնը լսելու ըլլաք՝ ձեր  
սիրտերը մի՛ խստացունէք” : Ստուգիւ և աչեղա-  
բար խորհեցէք մահին վրայ և իրաւ կերպով մը  
պատրաստ եղիք անոր համար : յամանակէն  
էվելի յարդի ի՞նչ բան ունինք , որ անոր  
արդար յառաջադիմութենէն մեր յաւիտենա-  
կան երջանկութիւնը կախում ունի :

2 . Վրատարները շատ նոր են Երկինքն և բո-  
լոր անոր Երշանիութեաննըուն մէջը նրանուն :  
Օմէ որ անոնք այսօր մեռնելու ըլլային նէ ,  
ան աւաղակին պէս կընային Քրիստոսի հետ  
Երկինքը ըլլալ : Վհ , անոնքի՞նչ մեծ իրաւունք  
ունին ուրախանալու : Քանզի ման է ճշմարիտ  
հաւատացեալներուն մեծ շահը : Փէլլ . ա . 21 :  
Պէտք է որ անոնք հաւատարմութեամբ “ բարի  
ընեն բոլոր մարդոց՝ ինչպէս որ պատեհութիւն  
ունին” . և որ յօժարութեամբ համբերեն աս  
կեանքին նեղութիւններուն , փորձութիւննե-

րուն , վիշտերուն , և աշխատութիւններուն , գիտնալով՝ թէ իրենց ժամանակը կարծ է , և թէ մահը իսկոյն զիրենք ներս պիտի մտցունէ իրենց վարձքին և իրենց հանգստութեանը մէջ : Ծանդ “Հակեն աղօմքով” որ չի մեղանչեն , և թէ իրենց Փարկութեան յոյսը ոչ ամպով ծածկը ին ոչ ալ կորսըվի : “ | ուն . ժը . 35—40 :

4 . ‘Ըստ շատ հօպ էն ‘Կայութեն և բույզ անոք պանջանանելուն մէջը հանալու : թէ որ անոնք այսօր մեռնելու ըլլային նէ , այսօր անոնք իրենց աչքերը տանջանքներուն մէջը պիտի բանային : Ո՛չ , ի՞նչ մեծ իրաւունք ունին շարերը իրենց գիրքին մէջը դողալու , իրենց մեղքերը և յիմարութիւնները մէկ զի ձգելու և ինքըզինքնին ապաշխարութեան և աղօմքի տալու . որ դուցէ Վստուած ներէ անոնց Հիսուսի համար . քանզի ոչ այլ ի՞նչ , բայց միայն Վստուծոյ ողորմութիւնը կի՞նայ պահել անոնք վայերուն անդունդէն :

### § Ե . Ըստ Աւետին կը այ :

ա Կայուն . ժէ . 1—58 :

Ն . Ո՞եր մարմինները՝ որ իրենց գերեզմաններուն մէջը հող կը դառնան , հոն մնալու ե՞ն մի . և բնաւ մէջ մըն ալ տեսնալու կամ լսելու չե՞ն մի :

Պ . Ըստ :

Ն . Ի՞նչ պիտի ըլլայ անոնց :

Պ . Վստուածորէն ապրելու յարութիւն պիտի առնեն :

Ն . Ի՞նչպէս գիտենք աս :

Պ . Վստուածաշունչը այսպէս կը սէ մեղի : ա Կայուն . ժէ ;

Հ . Արեք մարմինները ե՞րբ յարութիւն պիտի առնեն :

Պ . Դատաստանին օրը :

Հ . Ո՞վ պիտի յարուցանէ անոնք :

Պ . Տէր Յիսուս՝ Քրիստոս : Յօհ . Ժա . 25 :

Հ . Ի՞նչ կըսէ Առւրբ Գիրքը դատաստանին վրայով :

Պ . “ Խնչու որ ժամանակ պիտի գայ՝ որ բոլոր գերեզմանի մէջ եղողները անոր ձայնը պիտի լըսնեն , ու դուրս պիտի գան . անոնք որ բարեգործութիւն ըրեր են՝ կենաց յարութեան համար , և անոնք որ չարագործութիւն ըրեր են՝ դատապարտութեան յարութեան համար ” : Յօհ . Ե . 28 , 29 :

Հ . Ո՞վ ամէնէն առաջ մեռելներէն յարութիւն առաւ :

Պ . Տէր Յիսուս՝ Քրիստոս :

Հ . Ենոր մեռելներէն յարութիւն առնելը մեղի ալ կըսորվեցունե՞՞ մի թէ մենք ալ յարութիւն պիտի առնենք :

Պ . Հրամերես : ա Կողնել . Ժե . 20 — 22 : Գողծ . իշ . 23 : Կողաս . ա 18 : Յայտ . ա . 5 :

Հ . “ Եսն մարմիննե՞րը մի յարութիւն պիտի առնեն որ գետինը թաղված են . և մենք բուն մեր մարմինները՝ և մեր բարեկամները և աղքականները պիտի ճանշնա՞նք մի :

Պ . Այս :

Հ . Բայց մեր մարմինները ճիշտ մեր հիմակ վան միս ու արուն ունեցող մարմիններուն պէս մի պիտի ըլլան , որ ուտելու և խմելու և հանդերձի կըկարօտին . և որ կը ճիւլնտնան և կը չարչարմին ու կը մեռնին :

Պ . Զէ : Առք . Ժը . 25 : Պ . աւ . ի . 36 : ա Կողնել . Ժե . 50 :

Հ . Ենոնք պիտի փոխվի՞ն մի փառաւոր ու սքանչելի կերպով մը :

Պ . Նրամերես : ա Առնել . ԺԵ . 42—  
44 , 53 :

Ն . Աեր մարմինները որո՞ւն մարմինին պիտի  
նմանի :

Պ . Քրիստոսի մատաւորեալ մարմինին : ա  
Առնել . ԺԵ . 49 : Փէլլ . Ղ . 21 . Տեսնակ .  
Ատարլ . ԺԷ . 1 , 2 : Յայտ . ա . 12—16 :

Ն . Երբոր Յիսուս դատաստանին օրը մահը<sup>1</sup>  
վերցունէ նէ , առաջ ո՞վ պիտի յարութիւն առ-  
նէ :

Պ . Քրիստոնեաները : ԽԵ . Ղ . 16 : ա  
Առնել . ԺԵ . 23 :

Ն . Ետքը ո՞րոնք :

Պ . Զարերը : Յօհ . Ե . 28 , 29 : Գալք .  
ԻՂ . 15 :

Ն . Եւ բոլոր կենդանի մնացած Քրիստոնեա-  
ներուն ու չար մարդիկներուն ի՞նչ պիտի ըլլայ  
ան օրը :

Պ . Անոնց մարմինները պիտի փոխվին : ա  
Առնել\* . ԺԵ . 51 , 52 :

Ն . Յարութեան (Օրը Երկինքը գացած՝ և  
Դժոխարը խրկըլված ողինները կը բերվին և կը  
միաւորվին մի նորէն իրենց մարմիններուն  
շետ :

Պ . Նրամերես : ա ԽԵ . Ղ . 13 : Ատարլ .  
Ժ . 28 :

Ն . Աահամ վերցըվելէն և կենդանիները  
փոխվելէն ետեւ անոնց ամէնուն ի՞նչ պիտի ըլ-  
լայ :

Պ . Կը յափշտակվին անոնք վեր՝ Երկինքէն  
եկող Քրիստոսին դէմք ելլալու : ա ԽԵ . Ղ .  
16 : Ատարլ . իԵ . 31 , 32 : Յայտ . Ղ . 11 ,  
12 . ե՛ւ :

\* Ե Յայտ . Ոչ ամենեքեան ննջեսցուք , այլ  
ամենեքեան նորոգեսցուք յանկարծակի եղ :  
11\* իւ

Ծմէպէտև մեր մարմինները կըմեռնին և հող  
կըդառնան , բայց վերջին մեծ օրը նորէն յա-  
րութիւն պիտի առնեն Տէր Յիսուս Քրիստոս  
մեր Ամենակարող Փրկիչով : Եւ ինչպէս որ  
ինքը մեռելներէն յարութիւն առաւ , այնպէս  
ալ մենք : Առաջ արդարները , ետքը չարերը ,  
և ամէնքը՝ որ ան օրը երկրի վրայ կենդանի մնա-  
ցած են , իրենց մարմինները իսկոյն պիտի փոխ-  
վին : Ամենուն հոգիները՝ որ առաջ մեռած են  
և Երկինքը կամ Դժոխքը գացած են , պիտի  
բերվին ու նորէն ամէն մէկը իրենց մարմինին  
հետ պիտի միաւորին . և անատեն բոլոր մարդ-  
կային Անոր պիտի յափշտակվին վեր՝ Եր-  
կինքէն դատաստանի եկող Քրիստոսին դէմք  
ելլալու . և այնպէս ամէն ատեն Տէրոջը հետ պի-  
տի ըլլան :

1. Աս Հայութառետութիւնը իւսորձեցունել մէզը ,  
ո՞յ մէս Աստվածաշնչը Տէրոջը են . և լէ անոնց լան-  
կագին են . մենք անոնք աս կեանքին մէջը  
սուրբ պահելու ենք իր գործածութեանը հա-  
մար : Անոր պարտքն է անոնց առողջութեանը  
ու զօրութեանը համար հոգ տանիլ : Անոր  
պարտքն է մաքուր ըլլալ մեր հանդերձին որչափ  
որ մեր կարողութիւնները կըներեն . միշտ մա-  
քուր ըլլալ մեր անձին մէջը . և մաքուր պոռ-  
Նըկութենէն , շնութենէն , որկիրամոլութենէն  
և ամէն մեղքերէն : ա Կորնլ . Ղ . 9—20 : ա  
Ծմէտ . Ղ . 7 : “ Դուք ծախու առնըլվեցաք ,  
ալ փառք տըլիք Աստուծոյ ձեր մարմինին ու  
ձեր հոգիին մէջը՝ որ Աստուծմէ է ” :

2. Աս Հայութառետութիւնը իւսէրցունել մահին  
Հախը , և պժուարութիւնները , և պրայութիւնը :  
Ծմէպէտ մենք մեռնինք , բայց պիտի ապրինք .  
մենք մեր մարմիններէն յաւիտեան չենք հրա-  
ժարիր . Հայք . Ժմ . 25 , 26 : Անոնք ապա-  
կանութեամբ մի սերմանված են , անապականու-

թեամբ յարութիւն պիտի առնեն : Անոնք ան-  
պատուութեամբ մի սերմանված են , փառքի մէջ  
յարութիւն պիտի առնեն : Անոնք տկարու-  
թեամբ մի սերմանված են , զօրութեամբ յա-  
րութիւն պիտի առնեն : Անոնք շնչաւոր մար-  
միններով մի սերմանված են , յարութիւն պի-  
տի առնեն հոգեւոր մարմիններ : Վրիստոսի  
փառաւոր մարմինին նմանած պիտի փոխվին :

3 . Աս Հայութառետունեւուն կը խելաց մեռ  
Վրիստոսինեայ ապահովաններուն ու բարեկաններուն  
հակուան ձայնը :

Արդեօք մեր Նօրը կամ Ո՞օրը , մեր Երկանը  
կամ մեր Կնկանը , մեր Տղուն կամ մեր Աղջ-  
կանը , մեր Եղբօրը կամ մեր Վրոջը , կամ մեր  
Աղքականներուն կամ բարեկամներուն թաղ-  
ման ատենը՝ անոնց ետևեն մինչև գերեզմանը  
կերթա՞նք մի , և անոնք Վրիստոնեայ էի՞ն մի :  
Ուստի այսուշետե յաւիտեան երկինքին մշջը  
պիտի տեսնանք և պիտի դրկենք անոնք սիրով նոյն  
մարմիններով՝ էվելի գեղեցիկ ու փառաւոր ե-  
ղած , որոնք որ շատ լաւ գիտէինք և շատ կըսի-  
րէինք երբոր Երկրի վրայ էին : Ո՞ենք կըբաժ-  
նըվինք նորէն միաւորելու , միաւորիլ ու մէջ  
մըն ալ չի բաժնըվիլ :

Աս վարդապետութիւնը կըսորվեցունէ մեզի  
որ չարերուն մարմինները յարութիւն պիտի առ-  
նեն որ հոգիով ու մարմինով Դժոխքը ձգվին  
յաւիտեան : Անոնց պատահումը վայերուն աշ-  
խարհին մէջ պիտի ըլլայ ու չէ թէ ուրախու-  
թեան : Անոնք Նոգիով ու մարմնով մեղքին  
ծառայեցի՞ն մի և հօս Աստուծոյ դէմ ապստամ-  
բեցա՞ն մի : Ուրեմն ասկից եաքը անոնք Նո-  
գիով ու մարմնով մեղքի ու ապլստամբութեան  
պատիժը պիտի քաշեն : Ան՝ որ իր կեանքը  
բազմածախ հանդէսով կանցունէր ամէն օր , իր  
պապակեալ լեզուն զովացունելու համար կաթիլ  
մըծ ուր կըխնդրէր :

Ի՞նչպէս մեծ, ի՞նչպէս աշակին է Աստուած, որ իր հրամանովը ծովը ցամաքը սաստիկ դողալով իրենց մէջն եղած մեռեալները շուտով դուրս պիտի տան :

5. Աս ձարբադիպութեանը իւսուրիլեցունե մէպէ որ Յիսուս Քրիստոս Նոր Տերը ամենուն բառական Ամենակարուղ Փրկիչ Տըն է : Ի՞նչ սոսկալի, և ի՞նչ սարսափելի կերպով իր հրամանովը ծովը ու ցամաքը իրենց խորին խորունկութիւնովը դողալով՝ իսկոյն իրենց մէջը եղած մեռելները դուրս կուտան : Ի՞նչ մէկ տեսարան մըն է . Երկիրը անթիւ բազմութիւնով ծածկրված՝ ամէն մարդիկ աչքերնին շիտակ դէպի ան մեծ լուսափայլ Ամուսին վերցուցած՝ ուր որ Յիսուս փառաց Յագաւորը մեծ յաղթութիւնով կընսաի : Անատենը ո՞վ պիտի տարակուսի իր Աստուած ըլլալուն վրայով : Աարդուն վերջին թշնամին որ պիտի աւրըլի՛ Աաճն է . Հոգին ու Աարմինը երկուքն ալ Ինքը կրփրկէ : Աենք իր մէջը բովանդակեալ ենք . Ինքը կըյաղթէ մեղքը, մահը, և Պժոխքը . երնէկ անոնց՝ որ իրենց յոյսը Անոր վրայ կըդնեն :

### § 7. Պատրաստակներ վկայ :

Աատալե . իե . 31—46 :

Ն . Աստուած արդարութեամբ Յիսուս Քրիստոս իր Որդիին ձեռքովը աշխարհը դատելուն համար օր սահմանեց մի :

Պ . Հրամերես : Պարզ . ժէ . 30, 31 : Հառակ . թ . 16 : Իորնել . ե . 10 :

Ն . Ո՞ւ Քրիստոսի ատեանը պիտի եւայ :

Պ . “Ա ասն զի ամէնքնիս ալ Քրիստոսի  
ատեանին առջեւ պիտի կայնինք” : Հայով.  
Ժդ . 10 :

Հ . Դատաստանի օրին երբ գալը միայն ո՞վ  
գիտէ :

Պ . Ըստուած :

Հ . Են օրը գալուն վրայով Սուրբ Գիրքը  
ի՞նչպէս կըսէ :

Պ . “Գողի պէս կուգայ” : թ Պէտք . դ . 10 :  
Գարձ . ա . 11 :

Հ . Երբոր ատ օրը գայ նէ , աշխարհը ո՞րին  
գալը պիտի տեսնայ ամպերուն մէջ մեծ զօրու-  
թիւնով ու փառքով և Սուրբ Արեշտակները  
իրեն հետ :

Պ . Տէր Յիսուս Քրիստոսի գալը : Մատթէ .  
ին . 31 : Մարք . ը . 38 : թ Խէտ . ա . 7 : Յու-՛-՛ .  
Ե . 14 :

Հ . Տէրը ի՞նչպէս պիտի իջնայ Երկինքէն :  
Պ . “Ի՞նչու որ ինքը Տէրը հրամանով՝ Արեշ-  
տակապետին ձայնովը , ու Ըստուծոյ փողովը եր-  
կինքէն պիտի իջնայ” : ա Խէտ . դ . 15 :

Հ . Երբոր փողը չալվի՝ մեռեալները ու կեն-  
դանիները ի՞նչ պիտի ըլլան :

Պ . Մեռեալները յարութիւն պիտի առնեն և  
կենդանիները պիտի փոխվին : Յօհ . Ե . 27—  
29 : ա Կո՞նյալ . Ժն . 51, 52 :

Հ . Մեռեալները յարութիւն առնելին ետե ,  
և կենդանիները փոխվելին ետե , ու ամենքը յա-  
փշտակված օդին մէջը Քրիստոսի դէմը ելլալին  
ետե , աշխարհը ի՞նչ պիտի ըլլայ որն որ անոնք  
ետենին ձգեցին :

Պ . “Վշխարհը պիտի երի կրակով” : թ Պէտք .  
դ . 10 : Յայտ . ի . 11 :

Հ . “Սորէն ըսէ՛ նայիմ , թէ Տէրոջը գալը ի՞նչ-  
պէս պիտի ըլլայ” :

Պ . “Միայն թէ Տէրոջը օրը Գողի պէս կու-

գայ . որ անատենը Երկինքը աշուելի կերպով  
 պիտի անցնի , ու տարերքները կրակով էրված  
 պիտի չալին , երկիրս ալ՝ ու ինչ գործքեր որ  
 անոր մէջը կըդտնըվին նէ’ : թ Պիտ . դ . 10 :  
 ։ ։ Պրիստոս ի՞նչ տեսակ լոթուի վրայ պի-  
 տի նստի աշխարհը դատելու համար :

Պ . “Ո՞եծ լուսափայլ աթոռի մը վրայ” :

Յայտ . ի . 11 : Ո՞աբալ . ին . 31 :

։ Եւ ի՞նչ պիտի ժողվրդի իր առջեր :

Պ . Ըոլոր ազգերը : Ո՞աբալ . ին . 32 :

Յայտ . ի . 12 :

։ Ենատենը ի՞նչ պիտի բացվել :

Պ . “Գիրքերը” :

։ Եւ ամէն մարդիկ ի՞նչպէս պիտի դատ-  
 վին :

Պ . “Եմէն մէկը իր գործքերուն պէս” :

։ Աբալ . թ . 16 : ա Կորնել . դ . 5 : թ Կորնել .  
 ե . 10 : Յայտ . ի . 12 :

։ ։ Պրիստոս Վրդարները ո՞ւ ձեռքին կողմը  
 պիտի նստեցունէ :

Պ . Իր Եղ ձեռքին կողմը : Ո՞աբալ . ին .  
 32 , 33 :

։ Եւ չարերը ո՞ւ ձեռքին կողմը պիտի նստե-  
 ցունէ :

Պ . Ձախ ձեռքին կողմը :

։ Դևերն ալ հօն պիտի ըլլա՞ն և պիտի  
 դատվի՞ն մի :

Պ . Հրամերես : թ Պիտ . թ . 4 :

։ Յիսուս ի՞նչ պիտի ըսէ Վրդարներուն :

Պ . “Եկէք իմ օրս օրհնածները , աշխար-  
 հի սկիզբէն ձեզի համար պատրաստրված թա-  
 գաւորութիւնը ժառանգեցէք” : Ո՞աբալ . ին .  
 34 :

։ Եւ ի՞նչ պիտի ըսէ չարերուն :

Պ . “Ո՞եկ դի գացէք ինձմէ անիծեալներ՝  
 յաւիտենական կրակին մէջը , որ պատրաստրված

է Աատանային ու իր Նըրեշտակներուն'': Ա'առլ. .  
ինք. 41 :

Ն. Եւ երբոր դատաստանը լըմննայ նէ , բոլոր  
աշխարհը փառք պիտի տայ մի իմաստուն՝ սուրբ՝  
արդար և բարի Աստուծոյն :

Պ. Նըրամերես : Նառլ. թ. 5 : Գարձ .  
մէ. 30 :

Աստուած օր հաստատեց՝ որն որ մէկը չի-  
տեր , բայց միայն Խնքը , որ ան օրը արդարու-  
թեամբ Յիսուս Քրիստոսի ձեռքով պիտի դատէ-  
աշխարհը . ինչու որ ինքը բոլոր դատաստանը  
Որդիին յանձնեց :

Ա. ահագին օրիւն պատրահունքները պիտի  
սւլսն հետեւու կարգադրութեան մէջ Աստու-  
դիոքին ըստծին ողէս :

Ամենէն առաջ Տէր Յիսուս պիտի յայտնըվի  
Երկինքէն իր փառքով գալով , և բոլոր սուրբ  
Նըրեշտակները իրեն չետ : Խնքը Երկինքէն  
պիտի իջնայ ցնծութեան ձայնով , Նըրեշտակա-  
պետին ձայնով և Աստուծոյ փողով . յետոյ իր  
ձայնը պիտի ձգէ արթնցունել մեռեալները ու  
Երկիրը դատաստանի կոչել :

Փողը կընչըվի , և Քրիստոսով մեռեալները  
յարութիւն կառնեն առաջ արդարները , ետքը  
չարերը , և ամէնուն վերջը կենդանի մնացածները  
կըդիսվին . և ան ատենը բոլոր մարդկային ըն-  
տանիքները կը յափշտակվին (Օդին մէջը Քրիս-  
տոսին դէմք ելլալու . Երբոր անոնք վեր կելլան ,  
ահա Երկինքը կանցնի մեծնեղութիւնով , և բո-  
լոր բնութիւնները կը հալին կը բակով , Երկիրն  
ալ ու անոր մէջ եղած գործքերն ալ կերին :  
Նիմայ Տէր Յիսուս կը նստի իր մեծ սպիտակ ա-  
թոռին վրայ՝ իր փառքին աթոռին վրայ , և իր  
առջեր բոլոր ազգերը կը ժողվավին : Կիրքերը  
կը բացվին , ամէն մէկը կը դատատվի իր գործքերուն

պէս . արդարները չարերէն կըղատվին . վերջին  
վճիռը կըլըմննայ . չարերը իր ձախ կողմը յաւի-  
տենական դատապարտութեան կերթան . բայց  
արդարները յաւիտենական կենաց :

1. Պատաստանին օրն է որ Աստուած սահ-  
մանեց , ու նորը բոլոր ունելութին առջե-  
նի պէտք պարունակութիւն աւուր արդարութեամբ ,  
իր գոտութիւն օրհնութեամբ համար :

Արկիոնաւոր մարդիկ դատվեցան՝ Երկինքը կամ  
Դժոխքը երթալու համար դատաստանին օրը չե-  
կած . և միլիոնաւոր մարդիկ ալ դատաստանին  
օրը պիտի դատվին Երկինքը կամ Դժոխքը եր-  
թալու համար : Ամէնքն ալ հոն պիտի ներկա-  
յանան , և Աստուած պիտի ցուցունէ թէ իր դա-  
տաստանը ամէն մարդոյ վրայ արդար եղաւ և  
արդար է : Պատաստանին օրը հանդիսաւոր օք  
մը պիտի ըլլայ , ( Հայով. թ . 5 .) բոլոր աշխարհի  
հանճարեղ արարածներուն ցուցունելու համար  
որ աս աշխարհիս վերաբերեալ Աստուծոյ ը-  
րած բոլոր բաները , և իր բոլոր դատաստան-  
ները՝ իր բոլոր վարձքերը ու իր պատիժները  
ամէնը մէյ ունեղ արդարուն ու իրաւունքով նու :  
Խնքը իր բոլոր ճամբաներուն մէջ փառաւորեալ  
պիտի երեայ Արարիչ՝ Պահպանիչ՝ Փրկիչ և  
Պատաւոր ազգի մարդկան ըլլալուն համար :  
Ուստի լայնատարած ժողովքը պիտի ըսեն ,  
“ Ծնորհակալ ենք քենէ ով Տէր Ամենակարող  
Աստուած , որ դուն ես և էիր՝ ու գալու ես . ին-  
չու որ մեծ զօրութիւնը դուն ունիս և դուն թա-  
գաւորեցիր ” . Տարձրացիր ով Աստուած յաւի-  
տեանս յաւիտենից . Ալլուիա Տէր Աստուած  
ամենակալ թագաւորին :

2. Պատաստանին օրը՝ Արքապատի բոլցրու-  
թեան ու կառութին օրը պէտք ըլլայ :

Ենիկա Տէրոջը օրը պիտի ըլլայ . ամէն աչքե-  
րը պիտի տեսնան զինքը . ամէն ծունկ իրեն պի-

ակ խոնարհի և ամեն լեզու պիտի խոստովանի :  
Ասօր մեր Փրկիչը մեծն Վատուած պիտի երեայ  
անբաւ զօրութիւնով , բարութիւնով և ճշմար-  
տութիւնով իր բարեկամներուն զարմանքը ,  
վատահութիւնը , և փառքը . և իր թրշնամինե-  
րուն , սոսկալը , խռովութիւնը , և կործանումը :

3. 'Վատասագանը' Եշուարհի , և անոր Ազգը Եղած  
բոլը բաներուն Հախմանը պիտի ըլլոյ :

Ուրեմն ինչո՞ւ պիտի սիրենք աշխարհքը և ա-  
նոր բաները՝ որ այսչափ շուտով պիտի մեռնինք  
և մեր բոլոր սիրած բաները էտևնիս պիտի  
ձգենք , որ պիտի երին վերջը :

Վմենը ունայնութիւն էր լաւադոյն յոյժ լաւա-  
դոյն է մեղի որ պատրաստրվինք ան խիստ լրւսա-  
պայծառ և յաւիտենական աշխարհին համար ,  
ուր որ 'Քրիստոս գնաց և ուր որ զինքը սիրող-  
ներուն ամենքն այ երջանիկ պիտի ըրլան յաւի-  
տեան :

4. 'Վատասագանին օրը վերջնին վաղինադրութեան  
օրը պիտի ըլլոյ ամեն խորդուն իր գործութրուն ոկնի :  
Ռոլոր սիրտերուն գաղտնիքները բոլոր անձանց  
գործքերը պիտի յայտնըլին . Վատուած մէկու մը  
աչառութիւն չի պիտի ընէ . հապա ամեն մէկը  
իր արդար վարձքը պիտի ընդունէ իր ըրածին  
պէս որ և իցե բարի ըլլայ կամ չար :

5. Հօյսնի զընկընկը և բաժնենինը , ողբի  
ու վայելու սոսկալը օր իւ ուրիշ ուլոյ Վատասագան-  
ին օրը :

Վնոնք որ իրենց յսյու միայն 'Քրիստոսի  
վրայ չի հաստատեցին նէ , պիտի ողբան ան օրը :  
Կեղծաւորները պիտի ըսեն , "Տէր Տէր" . բայց  
ինքը պիտի պատասխանէ , [թէ] "Դնաւ չէի գիտեր  
ձեզ , մէկ դի գացէք ինէ անօրէնութիւն գոր-  
ծողներ" :

Ետքը ան օրը 'Քահանաները ու ժողովուրդը ,  
Արժապետները ու աշակերտները , Երիկները

ու Կնիկները ,՝ Օ՞նողքները ու Տղաքները , Եղբայրները ու Վուրերը , Բարեկամները ու Օ՞անօթները պիտի բաժնը լվին մեյ մըն ալ իրարու չի հանդիպելու համար :

Երբոր չարերը Աստուծմէ և Վրիստոսէն , և փառքէն բաժնը լվին ու Աստանային և իր Նըրեշտակներուն չետ դուրս յաւիտենական թշուառութեան և յուսահատութեան մէջ ձգվին , չո՞ն պիտի ըլլայ լալ ու սուգ , ողբ ու վայ :

6 . Ամէն մէկն պարսին է դադասադանի համար պատրաստ ըլլալ : Ապաշխարութիւնով ու Տէր Յիսուս Վրիստոսի մէջ եղած հաւատքով բարի ընթացքով , պարկեշտութիւնով , զգաստութիւնով և աղօթքով , “Որ անբիծ և անարատ գտնըլիք անոր առջին խաղաղութիւնով” թ Պէտք . դ . 11—14 : Ովկարդացող պատրաստ ե՞ս մի Աստուծոյ դէմը ելլալու :

—

### § Ժամ . Երկնորի Հետ :

Յայտ . իա և իր Գալուիը :

Ները ո՞ւր կերթան :

Պ . Երկինքը :

Պ . Ի՞նչպէս տեղ մըն է Երկինքը :

Պապ . Ժշկ . 11 : Առաջլ . իե . 21 : Յուդ . ե .

24 : Յայտ . իա և իր Գլուխը :

Պ . Ո՞վկընակի Երկինքին մէջը :

Պ . Աստուած ու բարի Նըրեշտակները :

Պ . ո՞ն մենք դէմ առ դէմ Աստուած պիտի տեսնա՞ք մի :

Պ . Հ րամերես : Ա տապէլ . Ե . 8 : Յօհ .  
Ժթ . 26 : Է . 24 : ա Յօհ . դ . 2 : Յայտ .  
իր . 4 :

Հ . Երկինքին մէջը մեր ժամանակը ի՞նչումէս  
պիտի անցունենք :

Պ . Աստուած օրհնելով և իր կամքը կատա-  
րելով : Յայտ . Է . 9—15 : Ժե . 3 : իր .  
3 . Ա՛ :

Հ . Յիսուս մեր փրկիչը պիտի տեսնա՞նք մի ,  
ու գոհութիւն պիտի տա՞նք մի , և պիտի օրհնե՞նք  
մի զինքը բոլու իր սիրոյն և փրկութեանը շա-  
մար :

Պ . Հ րամերես : Յօհ . Ժէ . 4 : Կող . դ .  
3 , 4 : Յայտ . դ . 4 , 5 : Ե . 9—14 :

Հ . Ի՞նչ պիտի ընդունենք մեր գլխուն վրայ :

Պ . Կենաց պսակը : Յակով . ա 12 : ա  
Պէտ . Ե . 4 : Ի Տէմ . դ . 8 : Յայտ . ր . 10 : դ  
4—11 :

Հ . Ի՞նչպէս պիտի զգեստաւորվինք :

Պ . Արդարութեան սպիտակ պատմուճանով :  
Յայտ . Է . 2—14 : Ժիթ . 8 :

Հ . Իմայ ի՞նչպէս փառաւորեալ պիտի ըլ-  
լանք , և մեր Հօրը Օմագաւորութեանը մէջը  
ի՞նչպէս պիտի ըլւսաւորվինք :

Պ . “ Արեգակին պէս ” : Ա տապէլ . Ժդ . 43 :  
ա Կողմէլ . Ժե . 49 :

Հ . Երկինքին մէջը արդարները մէյ մըն ալ  
անօթութիւն կամ ծարուութիւն , կամ մերկու-  
թիւն , կամ տաքութիւն , կամ ցուրտ , կամ  
արտմութիւն , կամ ցաւ , կամ մաչ , կամ մեղք  
պիտի ունենա՞ն մի :

Պ . Ոէ : Յայտ . Է . 15—17 :

Հ . Ի՞նչ կըսէ Առւրբ Գիրքը իրենց ար-  
ցունքներուն վրայով :

Պ . “ Եւ Աստուած պիտի ջնջէ անոնց աչքերէն  
բոլոր արցունքները , և մաչ ալ չի կայ , ոչ

սուգ , ոչ ալ աղաղակ , ոչ ալ մէջ մըն ալ ցաւ  
ու աշխատանք պիտի ըլլայ , ինչու որ առջի բա-  
ները անցան լըմընցան՝ : Յայտ . իա . 4 :

Դ . Երկինքը իրենց յաւիտենական քնակա-  
րանը պիտի ըլլայ մի :

Պ . Արամերես : Ա'տաթ . իե . 46 : Յօհ .  
ժդ . 2 , 3 :

Դ . Եւ արդարները գիտութիւնով , և  
սրբութիւնով ու երջանկութիւնով պիտի աճի՞ն  
մի յաւիտեանս յաւիտենից :

Պ . Արամերես :

Դ . Ի՞ոլոր ուրիշ տեղերէն էվելի՝ ո՞ր տեղը  
երթալու պիտի ուզենք ու ջանանք :

Պ . Երկինքը : Ա'տաթ . դ . 33 :

Դ . Ո՞վ ստացաւ Երկինքը մեզի համար , և  
պիտի ցուցընէ մեզի հոն երթալու ճամբան :

Պ . Տէր Յիսուսը . Յօհ . ժդ . 1—6 : Ժ . 27 ,  
30 : ժէ . 2 : Եբ . Ժ . 19—23 :

Դ . Ո՞ր մարդիկները յաւիտեան Երկինքէն  
դուրս պիտի ձգվին :

Պ . Չարերը : Ա'տաթ . է . 21—23 : Յայտ .  
ի . 15 : իա . 8 , 27 : իբ . 15 :

Կատաստանէն ետքը՝ Արդարները Երկինքը  
կըմտնան :

1 . Ան թագաւորութիւնը՝ որն որ Աստուած  
աշխարհին սկիզբէն պատրաստեց անոնց համար ,  
Երկինքն է . որ հոն հաստատեց իր Աթոռը :  
Ան է առ մեծ ու գեղեցիկ Վաղաքը , իոր Ե-  
րուսաղէմը , որուն շինողը և ստեղծողը Աստուած  
է , որն որ յաւիտենական հիմեր ունի : Առ  
իր հօրը տունին մէջը հանգստութեան շատ  
բնակարաններ կան , որոնք որ Յիսուս ինքը  
պատրաստեց անոնց համար՝ որ զինքը կըսիրեն :  
Ան Վաղաքը Արեի կարօտութիւն չունի , ոչ  
ալ Լուսինի՝ որ լուսաւորէ անիկա քանզի

Վատուծոյ փառքը պիտի լուսավայլէ զանի .  
և անոր լոյսը Դառն է՝ : Վատուծոյ խիստ  
փափկութեան դրախտը Երկինքն է , ուր որ ին-  
քը կը բնակի և իր փառքը կը յայտնէ , և կը չա-  
ղորդակցի դէմ առ դէմ օրնեալ բնակի չներուն  
չետ , և անոնք “ Իր ներկայութեանը ” ուրա-  
խութեան լիութիւնը կը գտնան , և իր աջ ձեռ-  
քը՝ յաւիտենական բերկրութիւնները ” : Վաք չի-  
տեսաւ , ականջ չի լսեց , ոչ ալ մարդու սիրու  
ինկաւ աս տեղին յաւիտենական փառքերը :

2 . Վագոն-Դայ Ճողովուրդին համար հան կայ Առ  
Տնայունն հանգուութեան նը որ Երկինքն է :

Պիտքը չէ որ աս աշխարհը սիրենք : Պիտքը  
չէ որ միշտ հոս բնակելու փափագինք . ինչու որ  
ասանկ աշխարհներու անթիւ բազմութեան ար-  
ժեքը Երկինքը է : Հոն գանձենք մեր գանձե-  
քը . հոն հաստատենք մեր յօժարութիւնները . ա  
Յօհ . թ . 15—17 : Ուտուլ . գ . 19—21 :  
Կող . դ . 1—4 : Ուեր աչքերը աս աշխարհին  
վրայ տնկելնուս համար , Երկինքը կը կորսընցու-  
նենք : Պիտքը չէ որ մեր ճամբուն վրայէն մինչեւ  
հոն մեր քաշած նախատինքը , և հալածանքը , և  
տառապանքը մեծ բան մը սեպենք : “ Խնչու որ  
“ Հիմակվան չարչարանքները մեզի յայտնը վելու  
փառին չետ բաղդատինը արժանի չեն ” :  
Հոտով . թ . 17 , 18 : Ուտուլ . ե . 10—12 :  
թ . Կորնել . դ . 16—8 : Եբք . ժա . 24—27 :  
Պիտքը չէ որ տրտմինք աս աշխարհիս մէջ աշ-  
խատութիւն , յուսահատութիւն , նեղութիւն ,  
լալ , և մաշ ունենալնուս համար . ինչու որ բոլոր  
աշխատութիւնները ան լուսապայծառ աշխարհ-  
քին մէջ պիտի դադարին՝ ուր որ մենք կերթանք .  
մահը չի կը նար մտնալ չոն . տրտմութիւնը և  
հառաշանքը չեռու պիտի մնան , և յաւիտենա-  
կան ուրախութիւնը պիտի ըլլայ մեր գլխուն

վրայ : ՀՅԱՅԻ . Ե . 14—17 : ի՞ա . 3 , 4 :  
 ոոդ չէ թէ որ քիչ մը ատեն կը հառաշենք կերպ  
 կերպ փորձութիւններով . ինչու որ մենք պիտի  
 պլոտընք պայծառութեան մէջ Աստուծոյ Գա-  
 ռին չետ , և սուրբ պիտի ըլլանք ինչպէս որ  
 Խնքը սուրբ է . և անոնք միայն պիտի մըտնան  
 քաղաքին դռւուներէն՝ որոնք որ իր պատուի-  
 րանքները կը կատարեն . ուրեմն աշխատինք  
 հանգստութեան մէջ մտնալու . Ո՞եր բոլոր  
 ցաւերուն և ճգնութիւններուն արժէքը Երկինքն  
 է . Երկինքին յոյսը մեր ուրախութիւնը և մսի-  
 թարութիւնը է ասկէց ետե . չո՞ն պիտի զարդա-  
 նանք մենք յաւիտենական սրբութեան ու եր-  
 ջանկութեան մէջ :

3 . ՀՅԻՍՈՒ ՎՐԻՍՏՈՍ ստացաւ Երկինքը մե-  
 զի համար . մենք Երկինքը կը մտնանք իր արժա-  
 նաւորութեանը պատճառաւ , Որուն ըլլայ բոլոր  
 փառքերը : ՀՅԱՅԻ . Պ . 5 , 12 , 21 : Ե . 9—  
 14 : ի՞ա . 27 :

4 . Թէ որ պատրաստ ենք Երկինքին համար ,  
 մեռնելու չի' պիտի վախնանք . Եւ երբոր ար-  
 դարները մեռնին , թէ ծեր ըլլան անոնք թէ պա-  
 տանի , մենք չի' պիտի լանք այնպէս թէ մահը  
 կորուստ մը եղաւ անոնց . մահը՝ իրենց մէկ մեծ  
 ստացուած մըն է . ոչ ալ անոնց նորէն աս աշ-  
 խարհը գալը ուղելու ենք . անոնք մեծապէս  
 երջանիկ են . ինչու որ ՎՐԻՍՏՈՍի չետ Երկին-  
 քին մէջն են :

5 . Երկինքը սուրբ աւուլ հըն է , և Աստուծոյ  
 բնակարգութեան . անոր համար մէկը չի կրնար վայելել  
 Երկինքը բաց ՚ի անոնցմէ՝ որոնք որ սուրբ են  
 ու Աստուծով կուրախանան : Հօհ . Պ . 3—6 :  
 Եբր . Ժ . 14 : Չարերը յաւիտեան դուրս ձգված  
 են : Ատոլ . Ե . 4 , 5 : Թարդ ամէն մէկը քննէ  
 ինքը վինքը թէ արդեօք Երկինքին համար պատ-  
 րանտ է մի , թէ չէ : բ Կորնլ . ԺՊ . 5 :

§ ԺՂ. Պատմութեան Հըսյ :

Պատմ. ԺՂ. 19—31 :

- Վ. Զարերը ո՞ւր պիտի ձգվին :  
 Պ. Պատմուքը : Յայտ . իմ . 8 :  
 Վ. Սուրբ Գիրքը ի՞նչ կըսէ չարերուն  
 Վսայ :  
 Պ. “ Ա եղաւորները Պատմուքը պիտի դառնան  
 և ամէն ազգերը՝ որ զԱստուած կըմոռնան ”:  
 Սապէ . թ . 18 :  
 Վ. Ինչպէս տեղ մըն է Պատմուքը :  
 Պ. Յագին տանջանքներու տեղ մըն է :  
 Ա ապէ . թ . 43—48 : Ա ապէ . ժղ . 40—42 :  
 Յայտ . իմ . 8 :  
 Վ. Ի՞նչով պիտի վասի :  
 Պ. Յաւիտենսական կրակով : Ա ապէ . իմ .  
 41 : Ա ապէ . թ . 43—48 : Պատմ. դղ . 17 :  
 Յայտ . իմ . 7 :  
 Վ. Զարերէն ՚ի զատ որո՞նք Պատմուքը պիտի  
 ձըգվին :  
 Պ. Սատանան և իր հրեշտակները : Ա ապէ .  
 իմ . 41 : ՚ը Պիտ . թ . 4 :  
 Վ. Պատմուքին տանջանքները ի՞նչ ընել պիտի  
 տայ չարերուն :  
 Պ. Լալ ու չեծել և իրենց ակոաները կըճը-  
 տել : Ա ապէ . թ . 12 : ժղ . 40—42 :  
 ՚ը . 13 :  
 Վ. Ի՞նչ խնդրեց մեծատունը երբոր տան-  
 ջանքներու բոցովը կըտանջըվէր :  
 Պ. Իր լեզուն զովացունելու չամար կաթիլ  
 մը ջուր : Պատմ. ժղ . 24 :  
 Վ. Զարերը աղէկ բան մը պիտի ունենա՞ն մի  
 Պատմուքին մէջը , քիչ մը օգնութիւն՝ քիչ  
 մը միսիթարութիւն տանջանքէն :

- Պ . Չէ : Ա՞սրի . թ . 43—48 : Ա՞սրի .  
 ի՞ն . 46 :
- Ն . Բնաւ անոնք Դժոխքէն դուրս պիտի ել-  
 լա՞ն մի :
- Պ . Չէ , չէ բնաւ : Յօհ . դ . 36 : Յոյգ . դ . 7 :  
 ի՞ն . 11 , 12 :
- Ն . Ոէկը կրնա՞յ մի Երկինքէն Դժոխքը եր-  
 թալ կամ Դժոխքէն Երկինքը :
- Պ . Չէ :
- Ն . Երկինքին ու Դժոխքին մէջ տեղը հաս-  
 տառված ի՞նչ կայ :
- Պ . “Ա ի՞չ մէծ” : Պ ս-ի . ժդ . 26 :
- Ն . Դժոխքին մէջը չարերուն քաշած պատի-  
 ժը ի՞նչ կրկուզի :
- Պ . Յաւիտենական պատիժ :
- Ն . Յս պատիժը զդշալ ու աղէկի դառնալ  
 կուտայ մի անոնց :
- Պ . Չէ :
- Ն . Պօղոս Առաքեալ ի՞նչ կըսէ ասոր վրա-  
 յով :
- Պ . “Խիստ վախնալու բան է կենդանի Առ-  
 տուծոյ ձեռքը իշնալը” : Եբր . ժ . 13 :
- Ն . Աստուած ի՞նչ պիտի ըլլայ դէպի չարե-  
 րուն :
- Պ . “Ա ատնիչ կրակ մը” : Եբր . ժդ . 29 :
- Ն . Ամէն ուրիշ բաներէն էվելի՝ ուրկից  
 փախչելու ջանալու ենք :
- Պ . Դժոխքէն : Ա՞սրի . ժ . 28 :
- Ն . Աստուած կուզէ՞ մի որ մենէ մէկը թշուա-  
 սարար կորսըվի Դժոխքին մէջը յաւիտեան :
- Պ . Չէ : Ե՞լի . լդ . 11 : թ Պէտ .  
 դ . 9 :
- Ն . Անանկ էնէ ինչո՞ւ չո՞ն կըխրկըվին շատերը :
- Պ . Քանզի կըմեղանչեն իրեն դէմ և կար-  
 շամարչեն Տէր Յիսուսը : Ա՞սրի . ժդ . 16 :
- Ն . Պ . 4—10 : թ Պէտ . մ . 6—9 :

Պատաստանէն ետքը չարերը Դժոխքը երթալու են :

1. Դժոխքը՝ Երկինքին խիստ չակառակ տեղ մըն է, անոր ու Երկինքին մէջ տեղը մէծ Անհ յը կայ հասպատակած, որուն վրայէն մէկը չի կրնար անցնիր : Դժոխքը Անգնդային Փօսն է, ուր մըութիւնը և խաւարը և սոսկումք կրթագաւորէ : Կրտին ու ծըծումքի լճ յը՝ յաւիտեան վառած . հոն ձգված են ամէն կերպ չարերը և հաւեալ կրմաշին և ծածկըված են յաւիտենական անարգանքով . հոն բարկութեան տակ ինկած պիտի կորսըլին և պիտի անիծիլին Աստուծումէ և պիտի լան ու հեծեն և կրծըտեն իրենց ակուաները տանջանքով , ու յաւիտեանս յաւիտենից ընաւ միսիթարութիւն մը չի գտնալով :

2. Աստուծ պատրաստեց նոյն ամենը արդարաբարձրանուն, մնան վերջը անողութ նացողուներան հայուր, Ան ծեր է Եղեց Ան պատրանի : Անչպէս որ ինքը արդարները կրվարձատրէ, անանկ ալ չարերը կրպատժէ : Անկին վարձքը և մէկալին պատիժը՝ երկուքըն ալ յաւիտենական են : Լեզու չի կրնար պատմել յաւիտենական կորուստին վայերը և տագնապները : Աստուծած գեպի իր թշնամիներուն հուր ծախիչ է :

3. Աս սոսկալի տանջանքներուն տեղը Աստուծոյ մէոքին պատճելը իւցուցունի, և ինչ պատիժ պարհանակիլը :

Անգը Աստուծոյ անչուն կարողութեանը և մեծութեանը գէմ յանցանք մըն է . Անքը կատէ մեղքը . ան խաղալիք չէ . անիկա՝ որ կըբարկացունէ Աստուծած՝ մեծապէս անարդ ու անպիտան է . թէ և թեթևութեամբ մարդիկ Անգը գործեն և անոր վրայ խօսին , բայց անոր համար պիտի վասին Անձին մէջը , և պիտի լան ու հեծեն յաւիտեան , թէ որ չապաշխարհն :

4. Ինչ որ Դժոխքը պիտի ըլլայ վայերուն

տեղը , և չարերուն բաժինը նէ , ուրեմն յեր մէկ-  
քնն մէջ մնալով ու այսպիս մշտական մէծ տնե-  
րուն մէկն իւնեւ յեր անցին ու մէծ շարութէն .  
ինչու որ յեր հոգին իւնորովնէ և իւրաստան ալ  
յանկառական է :

5 . Ուրեմն ի՞նչ յիշաբութէն ու անխւթութէն .  
իսկ Ա' եռուն մէջ :

Ինչու մարդիկ մեղքի մէջ կը շաբունակին , որ  
բարի անունը կապականէ և չոգին կը կորսընցու-  
նէ , որ անոր թօշակը մաշն է : Ի' նշպէս վաղան-  
ցիկ է անոր չեշտութիւնները : Ի' նշպէս անանց  
է անոր վիշտերը : Ճառապէտ . թ . 3 : Եստու . ժկ .  
25 : Ա' առաջ . ժկ . 25 , 26 :

6 . Կ'ստուած ողորմածութեամբ զգուշացուց  
չարերը իրենց աշագին վախճանէն : Ինքը  
չուզէր որ անոնք կորսըվին , հապա որ ապաշ-  
խարեն և իր Որդիին հաւատան ու ապրին :  
Ինոր համար ինքը շատ երկայնամիտ է դէպի ա-  
նոնց : Ուստի թող չարերը դառնան իրենց չար-  
ճամբայէն ու ապրին : Թէ որ անոնք կորսըվին  
նէ , յանցանքը բուն իրենցն է :

7 . Որովհետեւ չարերը ասանկ յաւիտենական  
կործանման վտանգին մէջն են , բոլոր Քահանա-  
ներուն , Ա արժապետներուն , և Օ' նողքներուն  
կիյնայ իրենց ժողովուրդը , և Վ' շակերտները ,  
և Տղաքները ստիպել , և անոնք թախանձել ,  
որ մինարուն Տէրը ո՛ր ատեն որ կը գտնըվի :  
Վէտք է իրենց բոլոր զօրութիւնովը էվել էվելօք  
գործածեն ամէն միջոցները , և աղօթեն սուրբ  
Հոգիին համար , որ աս միջոցները զօրացունէ  
ու օգտակար ընէ դէպի իրենց Փրկութեանը :

8 . Պէտք է գթութեամբ փութանք յիշել աս  
աշխարհի մէջ մեր միլիօնաւոր ընկերները , որ  
Փրկութեան ճամբուն վրայով տեղեկութիւն  
չունին , որ անոր համար հոգ չեն տանիր , և կը  
մեռնին ամէն օր ու Գ' ժողովը կիցնանկոր : Խորկենք

անոնց սուրբ Աւետարանը , և աղօթենք Տէրության որ իր հաւատարիմ պաշտօնեաները խրկէ առ Աւետարանը անոնց քարոզելու համար , որ փրկը վիճ :

Ուասն Դ . Աստուծոյ Օրէնքին վրայ :

§ ա . Օրէնքը առաջընդունելոյ :

Ելք . ժիշտ . 20 :

։ Տէրը ստեղծեց և տեղաւորցուց մեղ աս աշխարհին մեջ՝ որ զինքը ճանչնանք ու իրեն ծառայենք . հաճեցաւ մի տալ մեզի քանի մը յատուկ Օրէնքներ կամ Պատուիրանքներ որ մեր պարտաւորութիւնը սորվեցունէ մեզի :

Պ . Արամերես :

։ Վանի՛ հատ են աս Պատուիրանքները :

Պ . Տասը : Ելք . լուգ . 28 :

։ Ո՞վ էր աս երկելի ու բարի մարդը որ ընդունեց աս Տասը Պատուիրանքները Աստուծոյ ձեռքէն :

Պ . Ո՞վսէս :

։ Աստուած ինչի՛ վրայ գրեց զանոնք :

Պ . “ Երկու Վարեղէն Տախտակի վրայ ” :

Ելք . լա . 18 :

։ Եւ ինչո՞վ Աստուած գրեց անոնք :

Պ . “ Իր մատուիլը ” : Ելք . լուգ . 28 :

։ Առջի տախտակները Ո՞վսէս կոտրտեց . Աստուած երկրորդ անդամ գրեց Պատուիրանքները ուրիշ երկու Վարեղէն Տախտակներու վրայ . ան Տախտակները ինչի՛ մեջ պահել պատուիրեց Աստուած Ո՞վսէսին :

զ. Տապանի կամ Արնտուկի մէջ : Ելք .  
ի՞ն . 10—22 :

Հ . Տէրը ո՞ր ժողովուրդին տըւաւ աս Պատ-  
ուիրանքները որ իրենց՝ մեզի՝ և ամէն մարդոց  
համար պահպէն :

զ. Հրէաներուն :

Հ . Ատենը որ Աստուած աս Պատուի-  
րանքները գրեց ու Ոովսէսին տըւաւ անոնք,  
ինքը վար Լեռան մը վրայ իջաւ . Ի՞նչ էր ատ-  
Լեռանը անունը :

զ. Մինայ : Ելք . Ժթ . 9—20 :

Հ . Հրէից ժողովուրդը ո՞ւր կայնեցան :

զ. Լեռանը տակը : Ելք . Ժթ . 1—2 :

Հ . Երբոր Տէրը վար Մինայ լեռանը գա-  
գաթը իջաւ , որոտումն և փայլակն խիստ  
բարձրագույն փողին ձայնը՝ ու թանձը ամսկե-  
րը կային Լեռանը վրայ . և լեռը կըլառէր , և  
մուխը բարձրացաւ ու լեռը շարժեցաւ . երբոր  
Ոովսէս տեսաւ աս սոսկալի տեսարանը նէ խիստ  
շատ լախցաւ մի :

զ. Հրամերես . Եբք . Ժթ . 21 :

Հ . Եւ ժողովուրդը ո՞ւր գնաց :

զ. Անոնք հեռու տեղ մը գացին կայնե-  
ցան :

Հ . Ոովսէս վեր գէպի թանձը խաւարին մէջը  
գնաց մի , ուր որ Աստուած էր :

զ. Հրամերես :

Հ . Որչա՞փ ատեն Լեռը սպասեց Տէրովմէն  
Տասը Պատուիրանքները , և ուրիշ պատուեր-  
ներ ընդունելու համար :

զ. “Քառասուն օր և քառասուն դիշեր” :

Ելք . Բթ . 18 :

Հ . Այսափ ատենին մէջ բնաւ բան մը կե-  
րաւ խըմեց մի :

զ. Զէ՛ : բ Օրէն . Ժթ . 9 :

- Պ. Ո՞վ ողջ առողջ պահեց անիկա :  
 Պ. Աստուած : Աշտվել . դ . 4 :
- Ի. Երբար անիկա Անոնէն վար իջաւ նէ ,  
 ի՞նչպէս էր իր երեսը :
- Պ. Կը լուսափայլէր : Եւլու . լդ . 29—35 :
- Պ. Ո՞վսէս ի՞նչ կը ձրգէր իր երեսին վրայ :
- Պ. Քող մը :
- Ի. Վանի տարի առաջ աս Պատուիրանքները Ո՞վսէսին տրվեցան :
- Պ. Իրեք հազար տարիէն ալ առաջ :

Աստուած իր ողբրմութիւնովը չի թողուց մեղ  
 մեր տգիտութեան ու մեղքին մէջը , որ աս չարու-  
 թեան աշխարհին մէջէն անցնելով մեր պար-  
 տաւորութիւնը քննելով չիմանանք : Վանդի  
 մարդ մը իր տգիտութեան և մեղքին մէջը չի կրնար՝  
 և չուզէր ընել ասիկա : Հապա Խնքը մեզի Տասը  
 Պատուիրանք տրւաւ , որ շտար կտրճ այնպէս որ  
 մենք կարենանք դիւրութեամբ միտքերնիս բերել  
 անոնք : Եւ բոլորն իտպարբեալ՝ այնպէս որ ե-  
 թէ մենք զգուշութեամբ հետեխնք և ուղղու-  
 թեամբ հասկընանք անոնք նէ , դէպի Աստուած  
 ու դէպի մարդիկ եղած բոլը մեր պարտաւորու-  
 թիւնները պիտի գիտնանք :

1. Բոլը աշխարհի Արեգնշը և Տերը Աստ-  
 ուած է . Խնքը գերագոյն իշխանութիւն ունի իր  
 բոլը իմաստութեամբ արարածներուն վըսյ : Բոլը  
 օրէնքները ինուր իրդուն , և մէնք որպարտաւոր էնք  
 մշտ պէտը սիրել ու ինչն հնարդանդիւլ :

2. Իր Պատուիրանքները տրւաւ մարդոց ե-  
 րեելի ու ահագին ինըսոն իր , որ ամենին ուլ մակ-  
 նան ու մըստ գոնեն և հնարդանդիւն անոնց :

3. (Ձե՞ս որ) Օրէնքը տալու համար իր վար իջ-  
 նալուն միայն տեսնալը և լսելը այսչափ աշագին  
 էր և ասանկ վախով լեցուց ժողովուրդը նէ  
 ի՞նչ պիտի ըլլայ մեզի Ե՞ն որ ար (Օրէնքը չէ այս)

հենք, ու Աստուած յէտք տունի մէզ պատժէլու :  
 4. Արդոյս պարտաւորութեան միայն կատարեալ կանոնը՝ Աստուածոյ օրէնքն է: Երկրի վրայ եղած ամէն մարդ և ամէն աղդ գիտնալու համար, լին ո՞րն է չերակ և ո՞րն է ախուլ՝ Աստուածոյ Օրէնքն իշխանութիւն: Իր Օրէնքը Սուրբ է արդար՝ ու ճշմարիտ. բռնենք անիկա մեր պարտաւորութեան կանոնին պէս և աղօթենք շնորհք ընդունելու համար, որով կարենանք սիրել ու նազանդիլ անոր. աշխարհիս վրայ ամէնէն երևելի ու փառաւոր մարդը անիկա է, որ էվելի կը մօտենայ կատարելապէս Օրէնքին նազանդելու սրտով և կեանքով .

---

### § թ. Տասը Պատրիարքին վըտյ :

Աստաղն. Պատրիարք :

Ժամկ. ժը. 1—40 :

։ Ո՞րն է Առաջին Պատուիրանքը :

Պ. “ Ինէ ՚ի պատ ուրէշ Աստուածնէր չե պէտք անշնուա ” :

։ Քանի՛ Աստուածներ կան :

Պ. Ա՛ի միայն մէկ կենդանի ու ճշմարիտ Աստուած մը կայ :

։ Ի՞նչ ըսել կուզէ մեր Տէր Աստուածը, երբոր կըսէ մեզի, որ “ Դուն ինէ իզատ ուրիշ Աստուածներ չե պիտի ունենաս ” :

Պ. Ան ըսել իուղէ, ո՞ր մէզէ Աստուած՝ պէտք ու մայյն ունեցը պէտի բանենք :

։ Օքնքը ի՞նչպէս սիրել կըպահանջէ մենէ :

Պ. “ Պիտի սիրեսքու Տէր Աստուածդ քու

բոլոր սրտովդ՝ ու քու բոլոր հոգիովդ՝ և քու բոլոր զօրութիւնովդ՝ : ՚Ի (Օվեն. Պ. 4, 5: Ուստիւ. իպ. 35—38 :

• Ո՞րին յուսալու ենք :

Պ. Տէրողը ապաւինէ քու բոլոր սրտովը :  
Եռուն . Ք . 5 , 6 : Ասում . լա . 19 :

Վայում մէ մենք Վագոն-Ճեկ էլեկտ ինքնինքնիս սիրենք ու ինքնինքնուս ապաւինինք , կամ ուրիշ մարդու մը , կամ հարստութեան , կամ հաճութեան , կամ ինչ և իցէ բանի մը , աս Պատուիրանքը՝ ե՞՞ս մի կոտուզ :

Պ. Համերես : Առաջ. ճշը. 8, 9 : և §լ.  
կ. 17 : Երես. ժէ. 5 :

Հայոց կըսէ Յիշտուս Աստուծոյ ու  
մամօնայի ծառայութիւն ընելու վրայով :

Պ. Արդ մը չի կրնար երկու տէրոջ ծառայել . ինչու որ կամ մէկը պիտի ատէ , և մէկալը պիտի սիրէ . կամ մէկը պիտի պատուէ , և մէկալը անարգէ . չեք կրնար ծառայել Աստուծոյ ու մամօնայի : Ատալ . Ղ. 24 : Ժ . 37—39 :

Հառայութիւնն ընելու է  
Աստուծոյ:

Պ. “Երդ թէ ուտէք, թէ խմեք, թէ ինչ  
դործ ալ որ ընէք, ամէն բան Աստուծոյ փառ-  
քին համար ըրէք” : ա Ասքնէ . Ժ. 31 : Ասդ.  
Ք. 17 : ա Պէտք . Կ. 11 :

Հատուծոյ ծառայութիւն ընելու վրա  
յով ի՞նչ հաստատուն միտք ուներ ՀՅԵՍՈՒ :

Պ. “Բայց ես և իմ տունս Տէրը կըպաշ-  
ունք” : Յէս. իդ. 15 :

Տերը խնդրելուն վրայութեաւիթ իր Առղոմն որդիին

Պ. “ Յէւ որ խնդրես զի՞նքը պիտի գտնաս ,  
և թէ որ ըսղուս անիկա , ինքն ալ յաւի-  
տեան քեզ մէկ դի պիտի ձգէ ” : ա) Անոց -  
իլ . 9 :

Առաջին Պատրուիրանը վեհացունէ մէպէ՝ որ  
մայն մէկ կէնդանի ու ճշտրիտ Ասպուած իսյ . և  
իլլուհանջէ մէնէ՝ որ զինչը ճանչնանք և մայն զին-  
չը մէպէ Ասպուած ընդունէնք : Աս պատուիրան-  
քէն կըկախվի բոլոր մէկալներուն հաստատու-  
թիւնը :

1. Անոր համար իլլուհանջէ մէնէ գիտնալ լէ  
ինչ եւ ո՞ւ լի Ասպուած , եւ ինչ ըլլաւ մէպէ համար =  
Աս գիտութիւնը մենք յատկապէս Սուրբ Գիր-  
քերէն կըստանանք . նաև կըպաշանջէ մենէ Օյն-  
քը սիրել բոլոր սրաով և մտքով և զօրութիւ-  
նով , և զնազանդիլ իրեն ՚ի ներքուստ և արտա-  
քուստ առանց կեղծաւորութեան կամ անպատ-  
կառութեան , ամէն բանի մէջ , ամէն տեղ ,  
և ամէն ժամանակ , և ամէն յատկութիւններուն  
մէջը : Այնք պարտինք Օյնքը ընտրել մեզի և  
մեր տանք համար Աստուած , ինչպէս որ Ծեսու-  
րրաւ : Այեր գլխաւոր երջանկութիւնը իրեն  
երկրպագութեան և իր պաշտօնին մէջ պարտինք  
գտնալ . Աստուած պարտի ըլլալ մեզի մեր ամէնը ;  
և մեր ոգիներուն բաժինք հիմայ՝ և յաւիտեանս  
յաւիտենից :

2. Այնու կոնդրւնու առ Պատրուիրանը 1  
երբոր կըսենք՝ լէ Ասպուած չէ իսյ : 2<sup>o</sup> երբոր  
կամակիրութեամբ ագէստ կընանու Ասպուածոյ մըտ-  
յով և անհոգ Անոր բուլը գիտութեաններուն . 3<sup>o</sup>  
երբոր կըճանշնոնս Ասպուած , բայց ո՞ւ կընընեն  
զինչը , ո՞ւ ալ կընեն Ասպուածոյ ալէս կըծառաւնեն :  
Աս կերպով մարդոց բազմութիւնը ծերն ալ  
պատանին ալ Քրիստոնէից Քաղաքները կը-  
կոտրեն աս պատուիրանքը , և ինքըզինքնիւ

յաւիտենական բարկութեան տակը կը ձգեն :  
 4' Երբոր մենք կը յեացունենք Աստուածաշուն-  
 չեն մեղք ուրիշ Աստուած ճշնել յայտնի ու ծանու-  
 ցեալ իւնուննե և ճշառք Աստուածնե ՚ի զտո ,  
 ուրիշ Աստուած իւ Եկեհօնայ Ա'ն Աստուածնե ՚ի  
 զտո , և իրեւ Այսն ՚ի մուտ Աստուածունեան  
 ժայր , Որդի և Աստրի Հոգին ՚ի զտո : Եր-  
 բոր մենք մեզի ուրիշ Աստուած կամ Աստուած-  
 ներ կը շինենք Եէ հօվայէն ՚ի զատ , ինչպէս որ  
 տգետ ու շար կւապաշաները կը նեն : 5' Եր-  
 բոր Հրեշտակներուն , կամ Պատերուն կամ մեր  
 ընկերներուն կը ծառայենք կամ կաղօթենք որոնք  
 որ մեռան ու հիմայ ուրիշ աշխարհի մէջ են :  
 6' Երբոր մեզի նման մահկանացու մարդիկնե-  
 րուն կը հաւատանք ու կապաւինինք Աստուածոյ  
 գիտութիւնը և զօրութիւնը ունեցողի մը պէս ,  
 ինչպէս որ Աստերուն Կախարդներուն և Խա-  
 բերաներուն . և կերթանք անոնց ո՞վ Գուրու բա-  
 ները նմացանեն մեղք , և դեղատուութիւն ընեն  
 մեզի շարի կամ բարիի համար և ասոր նման  
 բաներ : 7' Եւ վերջապէս մէկ խօսքով մենք  
 կը կոարենք աս Պատուիրանքը երբոր մենք կը սի-  
 րենք և կը ծառայենք ինչ որ ըլլայ մէկ բան մը  
 Աստուածմէ էվելի : Եւց . իբ . 18 : Պատու .  
 ի . 27 : թ Օրին . ժը . 9—13 : ա Ատմ . իը :

3 . Օժող ամէն մէկերնիս մեր սիրտերը քննենք  
 ու հարցունենք , թէ Եկեհօնայ ճշառք Ա-  
 ստուածնե և Արեպանուն , և Պաշտոպաննելու և իմ  
 Փրկչուն ՚ի զտո ուրիշ Աստուածներ ունենո՞ւ մի .  
 իմ բոլոր սրբառվա , միտքովս և զօրութիւնովս  
 զինքը կը սիրեմկար մի . Ճշմարտապէս կը փափա-  
 քիմ ու կաշխատիմկար մի իր փառքին համար  
 ապրելու , Օյինքը վայելելու հիմայ ալ՝ ու ասկէց  
 ետեւ ալ . և զինքը աղէկ մը ճանչնալը և ամենէն  
 էվել զինքը սիրելը ու իրեն ծառայելը իմ եր-  
 ջանկութիւնս է՞մի : թ Անոց . ժէ . 2 : Եսոյ .  
 ինը . 8 :

ԵՐԵՎԱՆԻ Պատուիրանքը :

Դասնէլ . գ . 1—30 :

։ Խ՞նչ է Երկրորդ Պատուիրանքը :  
 Պ . “Ա երբ Երկինքին մէջ և վարը Երկրի  
 մէջ ու Երկրի տակը ջուրի մէջ բանի մը նմա-  
 նութիւն չի շինես դուն քեզի : Անոնց երկիր-  
 պագութիւն չընես ոչ ալ անոնք պաշտես . իւ-  
 չու որ Ես քու Տէր Աստուածդ՝ նախանձու  
 Աստուած մըն եմ . որ կը հատուցանեմ հայրե-  
 րուն մեղքը որդոցը՝ իմ ատելիներուս իրեք և  
 չորս ազգերուն . և կողորմիմ իմ սիրելիներուն  
 հաղար ազգերուն , և անոնց որ իմ հրամաններս  
 կըպահեն” :

։ Բնաւ մէկը զ Աստուած տեսա՞ծ է մի :  
 Պ . Չէ՛ : Ե (Օքն) . գ . 12 , 15 : Յօհ .  
 ա . 18 :

։ Ուրեմն կրնա՞նք մի գիտնալ թէ Աստ-  
 ուած ինչ կերպարանք ունի , կամ կրնա՞նք մի  
 փատէն՝ քարէն՝ ոսկիէն՝ և արծաթէն բան մը շի-  
 նել՝ որ իրեն նման երևայ :

Պ . Չէ՛ : Եսայ . իս . 1—31 : Գառչ . ժէ . 29 :  
 ։ Ուրեմն աս Պատուիրանքով Աստուած  
 բոլորովին մեզ կարգիլէ՞ մի իրեն նման ինչ որ  
 ըլլայ բան մը շինելէն :

Պ . Հրամերես :  
 ։ Աստուած շարգիլե՞ր մի երկինքին՝ երկրի  
 կար ջուրի մէջ եղած արարածներուն մէկին նը-  
 ման մէկ բան մը շինելը , ու անոր առջին մեր  
 երկիրպագութիւն ընելը մեր Աստուածոյն պէս :

Պ . Հրամերես :  
 ։ Ես պատուիրանքը կըսորվեցունէ՛ մի մե-  
 զի որ երկրպագութիւն ընելու ենք Աստուածոյ  
 պարզ ու սուրբ կերպով , որ Աստուած ինքը թէ-

պէտ անտեսանելի է մեզի , բայց մեծ ու բարի և  
ամէն տեղ ներկայ է :

Պ . Հ րամերես :

Ն . Ի՞՞նչ կըկոչվին ան մարդիկը՝ որ ճշմա-  
րիտ Աստուածը չեն ճանչնար , ու երկնից՝ երկրի՝  
և ջուրին մէջ եղած բաներուն նմանութիւնը  
կըշինեն , ու անոնց երկրպագութիւն կընեն և  
կըծառայեն իրենց Աստուածներուն պէս :

Պ . Եթանոս : Հառնէ , առ . 21—32 :

Ն . Ճէ՛ որ Հայրերը աս Պատուիրանքը կոտ-  
րեն եւ , Աստուած որի՞ն վրայ պիտի չատուցա-  
նէ իրենց անօրէնութիւնը :

Պ . Երենց Տղաքներուն վրայ մինչեւ իրեք և  
չորս ցեղ :

Ն . Եւ ի՞նչ պիտի ցուցընէ Աստուած ա-  
նոնցմէ չաղարներուն , որ զինքը կըսիրեն և իր  
Պատուիրանքները կըպահին :

Պ . “Ողորմութիւն” :

Ն . Հոս Տէրը ի՞նչ ըսել կուզէ , երբոր կը-  
սէ , թէ “Ես քու Տէր Աստուածդ նոխանչուա-  
Աստուած մըն եմ” :

Պ . Են ըսել կուզէ որ ինքը չի պիտի թո-  
ղու մեղ որ իրմէն ՚ի զատ ուրիշ Աստուած մը-  
ռնենաք : Եսայ . իր . 8 : ի՞լ . 11 :

Աս պատուիրանքը կըսորվեցունէ մեզի թէ որն  
է Աստուածոյ ընելու ճշմարիտ երկրպագութիւնը ,  
և ինչ ձեռով կըլլայ ատ երկիրպագութիւնը :  
Ունք երկիրպագութիւն ընելու ենք Աստուածոյ  
անկեղծութեամբ , յարգութեամբ , և իսնար-  
չութեամբ , ինչու Հագի հը՝ որ մէջ յայնուուր  
առշին անունսանելը է , բայց մէծ ու բարի և ամէն  
առեղ ներկայ է :

2 . Ունք կըկոտրենք աս Պատուիրանքը ,  
և երբոր կըզանանք շինել Աստուածոյ նմա-  
նութիւնը , կամ մեր խորհուրդներով կամ մեր

ձեռքով : 2. Երբոր մենք կըշինենք պատկեր  
մը կամ որ և իցէ արարածի կամ բանի մը նմա-  
նութիւնը վերը Երկինքին մէջ , կամ վարը  
Երկրի մէջ , կամ Երկրի տակը ջուրի մէջ , և  
երկիրպագութիւն կընենք անոր Աստուծոյ պէս :  
3. Աէրը և Նազանդութիւնը իրարու չիտ  
կապված են . թէ որ մենք զ Աստուած սիրենքնէ ,  
ովովէ առնենք իր Պատուերաները :

4. Անոնք որ կատեն զ Աստուած , կուռքերու  
երկիրպագութիւն կընեն , ճշմարիտ Աստուածը  
ճանչնալ չուզելով , անոնք իրենց սուտ Աստ-  
ուածներ կըշինեն : Ապականութիւնը Կոա-  
պաշտութեան ծնողքն է : Հասած . գլ . ա :

5. Ան միշտուոք ընկերներուն չեմախը , ո-  
րոնք որ Հելլանոս և Հուստուշը են՝ նկատ ստորին  
ուղղուել է :

Անոնք խղզըված են իրենց տգիտութեան և  
մեղքին մէջ , և մեղքը իր ամենացած և զգուելի  
ձեւերուն մէջը ընկղմած է . անոնց ամեն Կոա-  
պունները չարութեան տաճարներ են :

Անոնք տառապանքներու և թշուառութեան  
են թակայ են , և ասանկ պիտի ապրին , ապակա-  
նեալ են և մէկզմէկ կապականեն մինչև ժամանա-  
կին վերջը թէ որ Աստուածաշունչը՝ Գրիուլելան  
Աշտարակնը անոնց չէ նրկուել նէ : Աստուած թող  
հաճի կանչել մենէ մէկ քանիները ու Աւետա-  
րանը տանել տայ անոնց . անոնք որ մենէ չեն եր-  
թար , թող ամէն միջոցները գործածեն մեր  
օգնութիւնով անիկա խրկելու համար , յատկա-  
պէս աղօթելով որ Աստուած կամենայ բանալ  
ճամբան և օրհնել ան գործածվելու միջոցները  
մինչև որ բոլոր երկիրը լեցվի Իր գիտութիւնովը :  
Հարգենք Աստուածաշունչը էլիելի յարգութիւ-  
նով , որուն կընծայենք մեր ունեցած միտթա-  
րութիւնը և խաղաղութիւնը չիմայ , ու մեր եր-  
ջանկութեան յոյսը այսուշեաւ . և առատօրէն

Երախտագիտութիւն և շնորհակալութիւն ընենք  
Ըստուծոյ որ ինքը իր Կերագոյն ողորմութիւնով  
վը այնչափ բարձր ընտրեց մեզ և օրհնեց մեզ :  
6. Ըստուած՝ նախանձոտ Ըստուած մըն է .  
Ինքը իր փառքը և պատիւը փորված կուռքերու  
չի տար . Ինքը պիտի պատժէ Հայրերը՝ որոնք  
ասանկ ունայնութիւնները կըպաշտեն , նաև ի-  
րենց անօրէնութիւնը իջնաց Տղաժնեբուն վրայ  
պիտի հատուցանէ մինչև իրեք և չորս ցեղ :  
Ինյաց ողորմութիւն պիտի ցուցընէ անոնց հա-  
ղաբներուն՝ որոնք որ զինքը կըսիրեն և իր Պատ-  
ուիրանքները կըպահեն :

### Երրորդ Պատուիրանքները :

Դ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ե Լ 11—18 :

- 1. Ի՞նչ է Երրորդ Պատուիրանքը :
- Պ. “Բու Տէր Ըստուծոյդ անունը մնոտի բա-  
ներուն վրայ չառնես . քանզի Տէրը սուրբ չի պի-  
տի սեպէ անիկա որ իր անունը մնոտի բաներուն  
վրայ կառնէ” :
- 2. Ի՞նչ կընշանակէ քու Տէր Ըստուծոյդ  
անունը մնոտի բաներուն վրայ առնելը :
- Պ. Ըստուծոյ անունը Գործածէլը :
- 3. Ի՞նչպէս պարտինք գործածել Ըստուծոյ  
անունը :
- Պ. Պարզ , խոնարհ և շքեղ կերպով մը :
- 4. Ի՞նչ կընշանակէ Ըստուծոյ անունը պա-  
տեղը առնելը :
- Պ. Ըստուծոյ անունը գործածելը սուտ՝ ա-  
նարդ կամ թեթև կերպով մը :
- 5. Երբոր մենք երդում կընենք նէ , մեր  
ըսածը ճշմարիտ ըլլալու համար Ըստուած վկայ  
կոչած չե՞նք մի ըլլար :

Պ. Հրամերես :

Ն. Աւրեմն գիցուք թէ երբ որ մեր ըսածին սուտ ըլլալը գիտնանք ու ան իրաւցունելու համար վկայ կը կոչենք զԱստուած նէ , աս Պատուիրանքը չե՞նք մի կոտրեր :

Պ. Հրամերես : Պ Կառ . Ղ . 3 :

Ն. Աս Պատուիրանքը չարգիլե՞ր մի անինձելը և Երդում ընելը : Եւ իւղծառորդեալ՝ լւելու շնչն կերպով Աստուծոյ անունը գործածելը :

Ն. Հրամերես : Ի (Օրէն . իլլ . 58 : Աստուծ . Ե . 34—37 :

Ն. Ի՞նչ կը նշանակէ Աստուծոյ անմեղ չի թողուլը անիկա , որ իր անունը զուր տեղը կառնէ :

Պ. Աստուծոյ զինքը պատժելը : Պ Կառ . իլլ . 16 :

Աս պատուիրանքը կը սորվեցունէ մեզի Աւ ինչ պէս գործածելը Ենր Աստուծոյ մէծ ու բարի անունը :

1. Անենք Աստուծոյ վրայ Խորչելու ու խօսելու ենք , և աղօթելու ենք իրեն անկեղծ , խոնարչ , ու յարգական մտքով : Յիշելով միշտ թէ ինչպէս անչափ սուրբ ու բարձրացեալ է Խնքը , և թէ մեզի պէս ասանկնուաստ ու անարժան ստեղծուածներուն կը վայլէ որ վախնանք Խր փառաւորեալ անունէն : Ի (Օրէն . իլլ . 58 : Աստուծ . Ղ . 9 :

2. Անենք կը կոտրենք աս Պատուիրանքը , Ե Երբոր Երդում կը նենք . երբոր մեր սուռմիւնը իրաւցունելու համար զԱստուած վկայ կը կոչենք . Ասկէ էվելի մէծ նախատինք չի կը նար դէպի Ճշմարիտ Աստուծոյ : Աս Պատուիրանքը յատկապէս որոշված է սուտ երգում բներու մեղքին դէմ . այսինքն դատաւորին ատեանը կենալ կամ ուր ո՞ւ ըլլոյ , մեր ընկերին և կամ մեր

դրացիին համար ինչեւ իցէ մասնաւոր կերպով մը  
սուտ երդում ընելուն դէմ : Ա' արդիկ երբեմն  
սուտ երդում կընեն իրենց յանցանքը ծածկելու  
համար, կամ ուրիշի վրայ ձգելու համար : 2'  
Երբոր Ա' ստուծոյ անունը թեթև ու չնչին կեր-  
պով մը կըդործածենք մեր հասարակ խօսակ-  
ցութեան մէջը ինեպատակութեաննէ՛ ընելով . ու  
յիմար երդումներ ընելով, զորօրինակ, “Ա' ռաջ  
Ա' ստուած . Ա' ստուծոյ յայտնի է . Ա' ստուած  
վկայ . Ա' ստուած գիտէ որ”, և՛ : 3' Երբոր մէն  
իտնիծենիւ և երդում կընենիւ և կըհայհոյենիւ Ա' ս-  
տուծոյ սուրբ անունումը, ինչու որ չարագործ հայ-  
հոյինելու իւնեն : 4' Եւ երբոր մենք երկիրպա-  
գութիւն կընենք Ա' ստուծոյ թեթև ու անչոգ  
կերպով մը, կամ կեղծաւորութեամբ :

Տէրը անմշղ չեւ ունի իւցունեւ անին՝ “ո՞ ի՞ ա-  
նունը սուրբ անունիւ . ինքը աս Պատուիրան-  
քին ամէն յանցանքները չի մոռնար . երբեմն  
չարագործ երդում ընողները իրենց երդումը  
տակաւին իրենց շրթունքներուն վրայ որ էր,  
Ա' ստուած յանկարծ պատժեց ու իսկոյն մեռան:  
աշիւ առնելու մեծաշուք ու ահագին օրը կը  
մօտենակոր որ մենք հաշիւ պիտի տանք ամէն  
“դատարկ խօսքերուն” համար :

—————  
Չորրորդ Պատուիրանը :

Եստ . ծլ . 11 , 14 :

• Կ' նէ Հ' սրբորդ Պատուիրանքը :  
Պ. “Ա' արաթ օրը սուրբ պահելը յիշէ :  
Ա' եց օր պիտի աշխատիս և բոլոր գործերդ պիտի  
ընես . բայց Եօթներորդ օրը քու Տէր Ա' ստուծոյդ  
Կ' աբաթն է, ան օրը գործ մը չի պիտի գործես

դուն՝ ոչ քու տղադ՝ ոչ ալ աղջիկ՝ ոչ քու ծառադ, և ոչ աղախինդ. ոչ քու եղդ. ոչ ալ քու էշդ. և ոչ քու ամեն անասունդ. և ոչ քու նորահաւատդ, ոչ ալ քու տունդ եղած օտարականը : «Բանզի Տէր Աստուած վեց օրին մեջ ստեղծեց Երկինքը ու Երկիրը, ծովը և բոլոր անոնց մեջի եղածները. ու հանգստացաւ Եօթներորդ օրը. անոր համար Տէրը օրնեց եօթներորդ օրը և սրբեց անիկա՛ :

Հայոց պատմութեան պահանջման առաջնահարցը առաջին է առաջական առաջնահարցը:

Պ. Անք բար ան օրու պարտինք Եղեն ծա-  
սայել : Եսայ . ծզ . 2 :

Համար շաբաթ օրը չենք պահեք, ու կիրակի օրը կըպահենք:

Պ . Անոր համար որ մեր Տէրը Յիսուս կիրակի օրը յարութիւն առաւ :

Պանի՞օր պիտի աշխատինք ու մեր բոլոր  
գործերը պիտի ընենք :

Պ . Ա եցօր :  
Հ . Եւ աս օրերուն մէջ ըրած գործքերնիս  
Ըստուծոյ հաճելի ըլլալու համար մի ընելու  
ենք . և ամէն օր Ըստուծոյ աղօթելու ու բարի  
բաներուն վրայ խորհելու համար ժամանակ պա-  
շելո՞ւ ենք մի :

Հրամերես :  
Վենեին մէկ տեսակ գործ մը գործելու  
Հրաման ունի՞նք մի Կիրակի օրը :

¶ . Հրամերես : Հայութաբան-լեռան ու հայութաբան-գործեր : Ա' ապրիլ . ժկ . 1—13 : Ա' ապրիլ . 1—5 : Պ' սեպտեմբեր . ժկ . 9—16 : ժկ . 1—6 : Յօհ . Ե . 1—14 :

Այսօրին մէջ Աստուած խստիւ կարգիլէ  
մի բոլոր հասարակ ու սովորական գործքերը

1. Ո՞ւր տղաքը մեր աղջկեները, իսկ ծառա-

Ները, կամ՝ աղախինները, կամ մեր անասունները կամ մեզի չետ եղած օտարական մը Արքակի օրը գործել տալով ենք մի:

Պ. Չէ:

Ն. Ըէ որ անոնք գործել ուղեն ու մենք այլ կրնանք արդիլել անոնք նէ, արդիլելով ենք մի:

Պ. Նըրամերես:

Ն. Արքակի օրը կրնա՞նք մի զուարձացունել ինքրզինքնիս այսինքն ձի չեծնալով՝ կամ որսի երթալով՝ կամ խաղալով՝ կամ քնանալով կամ բան ծախու առնելով՝ կամ բան ծախելով: Կամ ու և իցէ կերպով մը զբոսանք ունենալ ուտելով և խմելով և իրարու չետ մարմնաւոր ու ոչինչ խօսակցութիւններ ընելով, կամ գաղտնի կամ բաց կերպով չարութիւնը յառաջ տանելով:

Պ. Չէ:

Ն. Արքակի օրը մեր պատաւորութիւնը չէ՞ մի որ մենք մէկ տեղ հաւքրվինք Աստուծոյ երկրագագութիւն ընենք, աղօթենք, և սուրբ Գիրքը կարդանք ու սուրբ Աւետարանին քարոզութիւնը մտիկ ընենք:

Պ. Նըրամերես: Պ. Չէ. Դ. 16: Ժ. 10: Վարժ. Ժ. 14: Ժ. 13: Ժ. 2: Ի. 7: ա Ասդնել. Ժ. 2: Եբ. Ժ. 25:

Սորբորդ Պատուիրանքը կըսորվեցունէ մեզի ընըլլունէն Աստուծոյ երկրագութիւն ընելու ու իրեն ծառայելու յադուի ծառանակը. այսինքն եօթը օրին մէկը կամ Աւ մէր ծառանակն Եօլներբորդ ժառը: Ան յատուկ օրը՝ որ Նըրէաները կըպահեն, շաբաթին Եօլներբորդ օրն է. աշխարհին ստեղծագործութեան սկիզբէն հաշուելով ատ օրը, որուն մէջ Աստուած հանգստացաւ իր գործէն: Ան յատուկ օրը՝ որն որ Վրիստոնեաները կըպահեն, շաբաթին առջէ օրն է. ինչու որ մեր

Տէր Յիսուսը ան օրը յարութիւն առաւ մեռել ներէն , և մեր փրկութեան գործը լըմնցուց ու անկէց հանգստացաւ : Գողծ . ի . 7 : ա Կոբինլ . ժղ . 1 , 2 : Յայտ . ա . 10 :

1 . Ան օրը սուրբ պահմէլու է . Ո՞ենք հանգստանալու ենք բոլոր գործքերէն բաց ՚ի հարկաւորութեան ու ողորմութեան գործերէն : Ո՞ենք աղօթելու ենք , Աստուծոյ խօսքերը ու բարի գիրքերը կարդալու ենք , մեր սիրտերը քննելու ենք , բարեսպաշտ խօսակցութիւն ունենալու ենք , Յիսուս Քրիստոսի ձեռքով Աստուծոյ ըրած մեծութիւնը և բարերարութիւնը միաբերնիս բերելու ենք , Երկինքին հանգստութեանը ու յաւիտենական օրջութեանը վրայով խորչելու ենք : Ո՞ենք Աստուծոյ Տունը երթալու ենք , և իր պաշտօնեաներուն ու ժողովուրդին չետ հաղորդ ըլլալու ենք , և որչափ որ կարելի է նէ բոլոր բարի խրատները ստանալ ուղելու ենք : Ո՞եկ խօսքով , մեր բոլոր խորչուրդները՝ զգացումները՝ խօսքերը և գործքերը Աստուծոյ ու իրեն ծառայելու համար ըլլալու է աս օրը :

2 . Ո՞ենք աս Պատուիրանքը կըկոտը ենք , Կախ երբոր հասարակ ու անպիտոն գործ մը կընենք Կիրակի օրը . Երկրորդ՝ երբոր մենք հեշտութիւններով՝ դատարկութիւնով կամ մեղքով կանցունենք ան օրը . Երրորդ՝ երբոր մեր խորչուրդները , մեր խօսակցութիւնը , մեր կարգացները , մեր լսածները , ու մեր ընկերութիւնը աշխարհային ըլլան . Ծորբորդ՝ երբոր զանց կընենք Աստուծոյ Տունը երթալ . կամ երբոր հոն կերթանք ու անկեղծութեամբ սրտի մտօք Աստուծոյ չենք ծառայեր , կամ Աիրակին նեղութիւն մը ու բեռ մը ըլլալ կըզգամիք :

3 . Աիրակին խորչելը շատ հասակսոկ բան ին է , բայց շատ մէծ մէկը է : Ան որ Կիրակին կըկոտ-

ըէ բուն իր Տէր Աստուածը կըզգկէ , ինչու որ  
ան օրը Տէրոջը օրն է : Ինքը ինքը նաև  
կըզգրկէ բարիք ընելէն ու բարիք ընդունելէն ան  
օրվան ընտիր ժամանակը և պատեհութիւնը  
փուծ տեղը կորսընցունելով . և իր օրինակին աղ-  
դու զօրութիւնովը որչափ որ կրնայ նէ , Աս-  
ուածպաշտութիւնը երկրիս վրայէն կաւրէ կը-  
խափանէ : «Քանզի բոլոր Քրիստոնեաները  
Կիրակին սուրբ պահելով՝ եկեղեցի երթալով  
քարոզ մըտիկ ընելով՝ աղօթք ընելով և բոլորո-  
վին չոգեսր բաներուն վրայ մտմտալով ան օրը  
«Քրիստոնէական օրէնքը կըհաստատվի , ու ա-  
նոր ճշմարտութիւնը զօրաւոր կերպով կըներ-  
գործէ ուրիշներուն :

4. Դժողով նարուցոյ Աստուծոյ ամենամեծ օրհնու-  
թիւններուն մէն է Կիրակին . Եօմը օրերուն մէ-  
ջի ամենէն աղէկ օրն է : Ոճէ որ մենք Կիրա-  
կիին պէս հանգստութեան օր մը չունենալով  
միշտաշխատէինք նէ , մեր միտքերը և մարմին-  
ները , ու ան ամեն անասունները՝ որ մենք կը-  
գործածենք , օրէ օր պիտի տկարանային և պիտի  
ձանձրանային , թմրէին և պիտի կորսըվէին :  
Կիրակիին հանգստութիւնը հարկաւոր է մեզ  
զուարձացունելու և մեզ զօրացունելու . ու նոյն  
ատենը Աստուծոյ օրհնութիւնը մեր աշխատու-  
թիւններուն ու մեր գործքերուն վրայ կիջնայ :

5. Կիրակին կըպահպանէն աշխարհի իրօնութ-  
փրկութեալը : Առանց Կիրակիի կրօնքը չի  
կրնար ըլլար . ան օրը Աւետարանը կըքարոզվի ,  
և ամենքը պատեհութիւն կունենան լսելու .  
Աստուած կըմօտենայ և կէվելցունէ իր օրչնու-  
թիւնը , մարդիկ իրենց մեզքերուն կըտեղեկա-  
նան , կըզդջան և ետ կըդանան : Եւ քրիստո-  
նեանները կաճին շնորհքով , և էվել էվելօք կը  
պատրաստրվին Երկինքին համար : Ոճէ որ Կի-  
րակի չունենայինք մեզ լուսաւորելու և զսպելու

և մաքրելու համար , թշուառ ու չար ՝ եթա-  
նոսներուն պէս պիտի ըլլայինք : Եւ ասկից ետև  
ալ չունենանք նէ , շուտով նորէն ՝ եթանոս  
պիտի ըլլանք :

6 . Աւրախանանք ան օրը՝ և շնորհակալ ըլ-  
լանք Վատուծոյ անոր համար , և պահենք անի-  
կա , և գործածենք անիկա ճշմարտութեամբ , և  
անանկ պատրաստըփինք ան գալու Աիրակիին  
համար՝ որ յաւիտեան չի պիտի վերջանայ :

Ես չորս Պատուիրանքները , որոնք որ հիմայ  
քննրվեցան մենէ՝ վայելչութեան համար Վուազին  
Տախտակ կըկոչվին . որոնք կըսորվըցունեն մե-  
զի յատկապէս դէպի Վատուած եղած մեր պարտ-  
քը , այսինքն Վատուածը մենք մի միայն կենդանի և  
ճշմարիտ Վատուածը ճանչնալու ու պաշտելու  
ենք , ՝ այր Արդին և սուրբ ՝ ոգին : Վատու-  
ածնք Իրեն երկիրապագութիւն ընելու ենք ,  
ինչպէս ինքը իր մէջը խիստ մեծ և փառաւորեալ  
ու բարի ՝ ոգի մըն է մեզի անտեսանելի , բայց  
ամէն տեղ ներկայ : Վատուածը մեր երկիրապագու-  
թեան մէջը , դէպի իրեն մեր բոլոր խորհուրդ-  
ներուն զգացումներուն և գործքերուն մէջը խո-  
նարչ անկեղծ հանդիսաւոր՝ և յարդական ըլլա-  
լու ենք . Եւ ատ՝ որ զգուշութեամբ և հաւա-  
տարմութեամբ սուրբ պահելու ենք ժամանակին  
ատ բաժինը՝ որն որ ինքը հաճեցաւ իր պաշտօ-  
նին համար , բոլորովին զատ գնելով ան՝ ու սրբե-  
լով :



Հինգելուրդ Պատուիրանք :

թ Ասմա-էլ . ժը . 1—33 :

։ Ի՞նչ է հինգերորդ Պատուիրանքը :

Պ . “Պատուէքու այրդ ու քու Այրդ , որ քեզի բարի ըլլայ , ու քու օրերդ երկան ըլլայ երկրի վրայ , որն որ քու Տէր Աստուածդ կուտայքեզի” :

։ Աեր կեանքը ո՞րոնցմէ կախում ունի ասաշխարհիս մէջ Աստուածմէ ետքը :

Պ . Աեր ծնողքներէն :

։ Ովկ են անոնք՝ որ կըհոգան մեզ երբոր մենք պզտի մանկունք ու տրղաքներ ենք ու չենք կրնար օգներ մենք մեզի . և որ կըհամբերեն մեր պօռալ կանչվրոտելուն և յիմարութիւններուն և չարութիւններուն :

Պ . Աեր այրը և Այրը :

։ Եւ ո՞վ են անոնք՝ որ կըսիրեն մեզ խանդակաթ սիրով , և կըդարմանեն մեզ երբոր մենք չիւանդ ըլլանք , և կըպահպանեն մեզ կորստեան վտանգէն և կըպատրաստեն կերակուր ու հանդերձ մեզի համար : Եւ բարի կերպով կըկրթեն մեզ ու կաղօթեն մեզի համար և կըջանան մեզ իմաստուն ու բարի տղաքներ ընել :

Պ . Աեր այրը ու Այրը :

։ Ուրեմն մեզի պէտքը չէ՞ մի որ անկեղծ ու խիստ մեծ սէր ունենանք մեր հօրը ու մօրը վրայ :

Պ . Ռամերես : Պ Կառ . ժիթ . 3 :

։ Ի՞նչ կըսէ Առորը Կիրքը ասոր վրայով :

Պ . “Անիծեալ է ան՝ որ կանարդէ իր այրը կամ Այրը” : թ Օրին . իէ . 16 :

։ Աեր պարտքը չէ՞ մի ամէն բանը շիտակ

ու իրաւ ընել , որն որ մեր Հայրը և Վայրը մեզ  
են ընել կը հրամանայեն :  
Պ . Հրամերես : Առև . առ . 8 : Ղ . 20 , 23 ,

22 :

Ն . Վատուած ի՞նչ կը պատուիրէ ասոր վօա-  
յով :

Պ . “Տղաքներ , վազանդ եղիք ձեր Օնողա-  
ցը ամէն բանի մէջ , ինչու որ ան է չաճ'լին  
Տէրոջը առջեր” : Կող . Պ . 20 : Եփ . Ղ . 1—3 :

Ն . Բնաւ մեր Օնողացը չետ անհոգու-  
թեամբ վարվելո՞ւ ենք մի . բնաւ անոնք ծաղը  
ընելու ե՞նք մի , կամ խարել կամ անիրաւու-  
թիւն ընել անոնց , թէ իրենց երեսին՝ թէ ի-  
րենց ետեւէն :

Պ . Ջէ :

Ն . Վատուած առջի դարերուն մէջ ի՞նչ ըլ-  
լալ ըսաւ կամակոր ու ապստամբ Օաւկի մը , որ  
իր Հօրը կամ իր Վօրը ձայնին չէր վազանդէր :

Պ . Ինքը պիտի քարկոծվի քարով՝ մինչև որ  
մեռնի : Ելք . իա . 15—17 : Դար . ի . 9 :  
ը Օրն . իա . 18—21 : Առև . ի . 20 :  
իլ . 24 :

Ն . Եւ ի՞նչ պիտի ըլլար ան աչքը՝ որ ծաղը  
կընէր իր հայրը , և իր մօրը վազանդիլ կա-  
նարգէր :

Պ . “Դաշտին Վաւաւը դուրս պիտի ձգէ ան ,  
և պղտի արծիւները պիտի ուտեն անիկա” :  
Առև . Ղ . 17 :

Ն . Արթութեան ու խրատի կարօտ եղած ա-  
տեննիս որի՞ն երթալու ենք :

Պ . Վեր Հօրը և Վօրը : Առև . առ . 8 : Ղ .  
20—23 : Ժդ . 1 :

Ն . Պէտքը չէ՞ մի մեզի որ երախտագէտ  
լանք մեր Օնողացը՝ մեզի համար բոլոր իրենց  
ըրածնուն ու քաշած նեղութիւններնուն հա-  
մար :

Պ . Հ րամերես :

Ն . Եւ երբոր անոնք ծերանան , կամ կը յր կամ կաղ , կամ չիւանդ ըլլան , և չի կրնան ինքը զինքներնուն օգնել , կամ աղքատ և թշուառութեան մէջ ըլլան նէ , մեր պարտքը չէ՞ մի բարեգութ ու մտադիր ըլլալ անոնց , և անոնց համար աշխատիլ և անոնց հոգ տանիլ :

Պ . Հ րամերես : ՞Օ՞ննա՛ . ինէ . 12 : իս՞ . 1 : Ա՞սովէ . ժե . 4—6 :

Ն . Ի՞նչ տեսակ տղան իր Հայրը և Ա՞սյրը մեծապէս կուրախացունէ :

Պ . Բարի տղան : Ա՞սվ . Ժ . 1 :

Ն . Ի՞նչ տեսակ տղան Հայրը և Ա՞սյրը խիստ կրտրտմեցունէ :

Պ . Չար տղան :

Ն . Ի՞նչ տեսակ տղան ատելի է բոլոր բարի մարդիկներուն ու կորուրվելու ճամբուն մէջն է :

Պ . Չար տղան :

Ն . Երբոր դուք կը տեսնաք Տղափները՝ որ ոչ կը սիրեն ոչ ալ կը նազանդին իրենց ՞Օ՞նողացը , ընկերութիւն ընելու է՞ք մի անոնց հետ :

Պ . Չէ : Ա՞սվ . ժգ . 20 :

Ն . Ա՞եր Տէրը Յիսուս երբոր տղայ էր նէ , իր ՞Օ՞նողքները սիրեց ու անոնց հնազանդեցաւ մի :

Պ . Հ րամերես : Ա՞սվ . թ . 51 :

Ն . Աս Պատուիրանքին մէջը Աստուած ի՞նչ խոստացաւ բոլոր բարի տղաքներուն՝ որ կը պատուեն իրենց ՞Օ՞նողքը :

Պ . Երկար կեանք :

Անդերորդ Պատուիրանքը կը սորվեցունէ մեղի մեր պարտքը գէպի մեր ՞Օ՞նողքներուն . որ Աստուածմէ ետքը անոնցմով կը նդունենք մեր կեանքը՝ մեր պահպանութիւնը՝ մեր կը թութիւնը՝ մեր վարքը և մեր օգնութիւնը :

1. Աւուշին պատրիարքութելու Ենք մէր Հայրը և Խ մէր  
Վայրը : Եւախ՝ մենք սիրելու ենք անոնք ան-  
կեղծ հաստատուն ու ջերմեռանդ սիրով ինչպէս  
որ արժանի է ծնողաց : Երկրորդ՝ Հաղանդելու  
ենք անոնց ամէն բանի մէջ արագութեամբ ,  
ուրախութեամբ , կամաւ , և կատարելապէս՝ լե-  
ցունելով անոնց հրամաններուն բոլորը : Եր-  
րորդ՝ յարդ՝ պատիւ՝ ու մեծարանք ցուցունելու  
ենք անոնց ծածուկ ու յայտնի : Ծանդ ամէնը  
տեսնան մեր դէպի անոնց կենցաղավարութիւ-  
նովնիս որ անոնք մեր ծնողքն են : Ո՞ենք ա-  
նոնցմէ բան մը պահելու չենք , ոչ ալ ինքըզինք-  
նիս անոնցմէ իմաստուն կարծելու ենք հապա ա-  
նոնց երթալու ենք մեր ամենալաւ և բարերար  
բարեկամներուն պէս խրատի ու խորհուրդի հա-  
մար : Չորրորդ՝ միշտ զգալու ենք մեր անոնց  
երախտապարտ ըլլալը իրենց բոլոր ըրածներնուն  
և մեզի համար չարչարվելնուն համար , և բնաւ  
խորհելու չենք որ մենք ալ անոնց բաւական  
հատուցում կրնանք ընել : Երբոր անոնք ծե-  
րանան , կամ հիւընդնան կամ տկարանան և  
անօգնական մընան կամ աղքատ ու նեղութեան  
մէջ ըլլան , անատենը բնաւ անտես թողելու  
չենք անոնք , հտպա էվելօք ականջ դնելու ենք  
ու հոգ տանելու ենք անոնց ուղածին համար որ-  
չափ որ կրնանք , և պաշտպանել անոնք ամէն  
նախատինքներէն ու անիրաւութիւններէն :

2. Ո՞ենք կըկոտրենք աս Պատուիրանքը եր-  
բոր չենք կատարեր աս պարտաւորութիւններուն  
մէկը կամ ամէնը՝ որ հիմնայ յիշվեցաւ :

Ո՞վ տղաքներ՝ աս ձեր պարտաւորութիւնները  
լեցունելու համար հոգ կրաանիքկոր մի . Հա-  
ղանդ տղաքներ էք մի : Ի՞նչու որ աննազանդ  
տղայ մը բնաւ բարեյաջողութիւն չի պիտի  
գտնայ . ինքը ամօթ ու սրտի ցաւ է իր՝ Օ՞նողա-  
ցը . ինքը բուն իր վարքին վրայ նախատինք կը

բերէ , իր բարի անունը կըկորսընցունէ աշխարհի մէջ . Աստուծոյ բարեկամութիւնը կըկորսընցունէ , և գուցէ իր ունեցած օրերուն կէսին չափ չի պիտի ապրի . բայց նազանդ տղայ մը՝ որ կըպատուէ իր Հայրը ու Վայրը . սիրելի տղայ մընէ : Ինքը օրվանեալ Փրկիչին օրինակին կըչետեի , որ երբ Երկրի վրայ էր , պատուեց իր Հայրը ու Վայրը : Հնորհքը ու վարձքերը կըպաշվին առատօրէն ասանկ տղի մը համար , մենք կընանք յուսար որ ինքը երջանիկ պիտի ըլլայ աս աշխարհիս մէջ , և գալու աշխարհին մէջ ալ :

3 . Աս Պատուիրանքը կըսորվեցունէ մեզի որ մենք պատուելու ենք մեր մեծերը նաև ան ամէնն ալ , որ կիշխեն մեր վրայ : Աս պատուիրանքը կըսկըսի առաջ ծնողքէն , ինչու որ յարգութեան՝ պատույ՝ հնազանդութեան՝ և քաղաքավարութեան հիմը ընտանեաց մէջէն կըսկըսի . թէ որ մենք մեր ծնողացը նազանդինք՝ ու զիւրենք սիրենք՝ և իրենց չետ յարգութեամբ ու քաղաքավարութեամբ վարվինք նէ , անատենը ուրիշ ամէն տեղ ալ պիտի սկըսի գործը ու յառաջանայ : Բայց թէ որ հոն ըսկըսի նէ , գուցէ բնաւ չի պիտի սկըսի ուրիշ տեղ : Պատուցէ տղան պիտի մեծնայ անօրէն մարդ մը պիտի ըլլայ : Ուստի ծնողքները և կամ ո և իցէ կերպիւ տղացոց հոգ տանողները չի մոռնալու են աս բանը :

Ա Եցելուրդ Պատուիրանքը :

‘Օ՞ննե՛տ . Դ . 1 — 16 :

։ Լուսէ և Ա Եցելորդ Պատուիրանքը :  
Պ . Վի սպանաներ :

։ կ՞ուզ չըսպաննելու է :  
 Պ. Ծնաւ մէկ անձ մը սպաննելու չէ :  
 ։ Կընա՞նք մի սպաններ անասունները  
 ու թռչունները :  
 Պ. Ռամերնս :  
 ։ Ո՞վ աղատութիւն տրւաւ մեզի ասանկ  
 ընելու :  
 Պ. Աստուած՝ Օհնութ. թ. 1—4 : ա Տէմ.  
 թ. 3—5 եջ :  
 ։ Բայց ինչո՞ւ չամար մեռցունելու ենք  
 անոնք . մեր յօժարութեա՞սը չամար , թէ մեր  
 դործածութեանք :

Պ. Ո՞եր գործածութեանը չամար :  
 ։ ոգիին փրկութենէն ետքը ի՞նչ է խիստ  
 պատուական բանը մարդուս :

Պ. Իր կեանքը : Յա՞ն . թ. 4 :  
 ։ Ո՞ենք չենք կրնար կեանք տալ . ի-  
 րաւունք ունի՞նք մի վերցունել անիկա՝ որնոր  
 չենք կրնար տալ :

Պ. Չէ : Օհնութ . լ. 2 : թ Ժառագ . ե . 7 :  
 ։ Ծնաւ իրաւունք ունի՞նք մի կորսընցունել  
 րուն մեր կեանքը :

Պ. Չէ . ա Աամուել . լա . 4 : Ո՞ապիւ . իէ .  
 3—5 : Կարծ . ա . 16 , 25 :

։ Ո՞իայն ո՞վ կրնայ կեանք տալ , և ո՞վ  
 միայն իրաւունք ունի կեանքը վերցունել :

Պ. Աստուած : Օհնութ . թ. 7 : թ . 5 , 6 :  
 Ժառաց . ժդ . 22 , 27 :

։ Ժէ որ մէկ մարդ մը դիպուածով մը ու-  
 րիշ մարդ մը մեռցունէ , երբոր ինքը բնաւ ա-  
 մենեին չէր ուզեր ընել ան , աս Պատուիրանքին  
 տակը ինկած յանցաւո՞ր է մի :

Պ. Չէ : Ժառաց . լե . 22—25 :

։ Բայց թէ որ մենք խորհրդածութեամբ և  
 դիտաւորութեամբ , թշնամութեան կամ նա-  
 խանձու ոխակալութեան կամ ուրիշ գէշ կիրքէ :

մը համար մեոցունենք մեր գոյակիցը , թէ ծեր , թէ պատանի , յանցաւոր ենք մի աս պատուի բանքին տակը ինկած և մարդասպաններուն կարգը սեպված :

Պ . Հրամերես :

Ն . Ըսէ նայիմ ան (Օրէնքը , որն որ Եստուած տրւաւ Հրէից չարադրծ մարդասպաններուն վրայով , ըսելով , “Են” որ կըսպաննէ մարդ մը ” :

Պ . “Են” որ կըսպաննէ մարդ մը , անշուշտ պիտի մեսնի” : Դաստիարակութեան 17—22 : Օհնութ . թ . 6 :

Ն . Տէրը կարդիլէ մեր սպաննելը մեր դըրացին . բայց կընա՞նք մի իրեն բարկանալ ու զինքը ատել և ծեծել ու իրեն չետ չարաչար վարդիլ , և զինքը մեոցունելու սիրտ ալ ունենալ :

Պ . Ծէ , բնաւ ամեննեին : Դաստիարակութեան 18 : Առաջնաւ . ե . 21 , 22 :

Ն . Են մարդուն վրայով ի՞նչ կըսվի Առորք Վիրքին մէջը , որ իր եղբայրը կատէ :

Պ . “Ով որ իր եղբայրը կատէ , մարդասպան” : Յառաջ . դ . 11—15 :

Ն . Որուն գիրկը բարկութիւնը կըհանգչի :

Պ . “Յիմարներուն գիրկը” : Ճառապալ . է . 10 : Յառաջ . ա . 19 , 20 :

Ն . Ի՞նչ կըսվի Արեգակին ձեր բարկութեանը վրայ մտնալուն վրայով :

Պ . “Արեգակը ձեր բարկութեանը վրայ թաղ հարը չի մըտնայ” : Եփու . դ . 26 :

Ն . Բայց դիցուք թէ մեր դրացինը մեր թըշնամին է և մեզ ամէնուս անիրաւութիւն կընէ իր զօրութիւնովք և մեզ մեոցունելու այ սիրտ մը ունի , ի՞նչպէս պարտինք զգալ և ի՞նչ պարտինք ընել իրեն :

Պ . Պարտինք սիրել անիկա , ու բարի ընել իրեն : Ելքայ . իդ . 4 , 5 : Հառապալ . ժբ . 17 :

։ Առեր Փրկիւը ի՞նչ կըպատուիրէ մեր  
թշնամիները սիրելուն վրայով :

Պ. “Չեր թշնամիները սիրեցէք, օրնեցէք  
անոնք՝ որ կանիծեն ձեզ, բարի ըրէք անոնց՝  
որ կատեն ձեզ, և աղօթք ըրէք անոնց համար  
որ ձեզ կըշարժկեն ու կըհալածեն ձեզ”:

Առաջ. Ե. 44 : Նույն. Ժր. 14 :

։ Ըսէ նայիմ, ի՞նչ կըսէ Պօղոս Առա-  
քեալը վրէժխնդրութիւն ընելու վրայով :

Պ. Արելիներ, ինքըզինքներնուգ վրէժխն-  
դրութիւն մի ընէք, հապա տեղ տըւէք բար-  
կութեան, ինչու որ դրված է թէ “Խմն է  
վրէժխնդրութիւնը, ես պիտի հատուցանեմ”,  
կըսէ Տէրը : Նույն. Ժր. 19—21 :

։ Ըսէ նայիմ աս խօսքէն ետքը ի՞նչ կը  
հետեցունէ :

Պ. “Ուստի թէ որ անօթի է նէ քու թշնամիդ  
հաց տուր իրեն, թէ որ ծարաւ է ջուր տուր ի-  
րեն, որ ասանկ ընելով կրակի կայծակներ կը  
դիզես իր գլխուն վրայ” : ա Առաւել. իդ. · 1—15 : իդ. · 1—11 : Առաւ. ին. · 21, 22 :

։ Երւոր Յիսուս բամբասվեցաւ նէ, ի՞նչ  
ըրաւ :

Պ. “Խնքը փոխարէնը չէր բամբասէր” : ա  
Առաւ. ի. · 23 :

։ Որո՞նց համար մնաւաւ, և որո՞նց հա-  
մար աղօթեց խաչին վրայ :

Պ. Իր թշնամիներուն համար : Առաւ. իդ. · 34 : Գարծ. է. · 60 : Նույն. Ե. 6—8 :

։ Ի՞նչ կըսվի ամենուն հետ խաղաղութիւն  
ընելու վրայով :

Պ. “Թէ որ կարելի է նէ ձեզի՝ ամէն մար-  
դու հետ խաղաղութիւն ըրէք” : Նույն. Ժր. ·  
18 : Առաւ. իդ. · 14 :

։ Եթէ արարարը չէ մի մեր ընկերը աղա-  
տել ամէն վճաներէն և մաչէն, և խաղաղու-

թիւն ընել անոր և ուրիշներուն մէջը խռովութիւն եղած ատենը :

Պ. Հրամերես : Ա. Կ. Տ. Ժ. 18 : Ա. ապէլ . Ե. 43 : Պ. ուկ . Ժ. 36 , 37 :

Հ. Ի՞նչ կըսէ մէր Փրկիչը խաղաղութիւն ընողներուն :

Պ. “Երանի” խաղաղութիւն ընողներուն , ինչու որ անոնք Աստուծոյ որդիքը պիտի կոչվին” : Ա. ապէլ . Ե. 9 :

Հ. Ո՞վ էր առաջին մարդասպանը և մեռցուց իր եղայրը :

Պ. կային : Օ՞ննո՞ւ . Ղ. 1—8 : Յօհ . ը . 44 : ա Յօհ . Ղ. 13 :

Հ. Ի՞արկացող , ոխակալ , մարդասպան մարդը երջանիկ է՞ մի :

Պ. Շէ :

Հ. Ա. արդասպանութիւնը դիւրին կերպով կըծածկը մի :

Պ. Շէ : Օ՞ննո՞ւ . Ղ. 8—10 : Խառոց . Լ. 23 : Ա. ակ . Ժ. 3 : Ե. 21 :

Հ. Ա. արդասպանութիւնը խիստ սոսկալի յանցանք մըն է . անոնք՝ որ աս յանցանքը կը գործեն ո՞ւր պիտի ունենան իրենց բաժինը , թէ որ չապաշխարեն :

Պ. կրակի լիճին մէջը : Կաղա . Ե. 21 : ա Յօհ . Ղ. 15 : Յայտ . իա . 8 : իլ . 15 :

Հ. Ի՞ականաբար՝ նախանձութեամբ , ատելութեամբ , բարկութեամբ , չարութեամբ և զրէժինդրութեամբ լեցուն սիրտեր չե՞նք մի ունենար , յատկապէս դէպի անոնց՝ որ կըվնասեն մեզի :

Պ. Հրամերես : Ա. ապէլ . Ժ. 18 : 9 :

Հ. Աւրեմն աս պատուիրանքը պահպատու սկըսելէն առաջ ի՞նչ տեսակ սիրտերը կըկարութինք :

Պ. Եսը Աիրաերու : Յօհ . Ղ. 3—6 :

Ա եցերորդ Պատուիրանքը կըսորվեցունէ  
մեղի թէ ինչ կերպով մեծարելու ենք մեր ընկե-  
րին անձը ու կեանքը , բռւն մեր անձին պէս :

1 . Վենք չէ թէ մեր ընկերը չի մեռցունելու  
ենք , ոչ ալ բարկութեան՝ թշնամութեան՝ կամ  
ոխակալութեան զգացումներ ունենալու ենք ա-  
նոր դէմ . Հապա նաև սիրելու ենք ու պաշտ-  
պանելու ենք իր անձը և կեանքը բռւն մեր ան-  
ձին պէս : Վենք խաղաղութիւն ընելու ենք  
անոր չետ , և յառաջացունելու ենք իր խաղա-  
ղութիւնը ուրիշներուն չետ , մինչև անգամ ին-  
քը մեր թշնամին ըլլայ ալ նէ : Հիսուս Քրիս-  
տոս է մեր կատարեալ օրինակը :

2 . Վենք կըկոտրենք աս Պատուիրանքը . Նախ  
երբոր բարկանանք ու ատենք մեր ընկերը մեր  
սրտին մէջը : Աս սրտի մէջ մարդասպանութիւն է :  
Երկրորդ՝ մենք կըկոտրենք ան՝ մեծագոյն աստի-  
ճանով , երբոր կըյայտնենք մեր բարկութիւնը և  
ատելութիւնը իրեն չետ չի խօսելով , կամ ա-  
նէծքներով ու գէշ անուններով զինքը նախա-  
տելով , կամ իր պատուցյն ու իր օգուտին ա-  
նիրաւութիւն ընելով թէ ծածուկ և թէ յայտնի  
կերպով : Երրորդ՝ էվելի մեծագոյն աստիճա-  
նով , երբոր անանկ յառաջ կերթանք որ վրան  
վազել և ծեծել ջախջախել զինքը ու մեռածի  
պէս ձգել զինքը , չոդ չէ ինչ կերպով որ ըլլայ :  
Չորրորդ՝ երբոր մեր ընկերին բան մը կուտանք  
ուտելու կամ խմելու , որն որ մենք դիտենք թէ  
պիտի կորսընցունէ իր առողջութիւնը և կեանքը ,  
կամ թէ միայն վտանգի մէջ պիտի ձգէ զանոնք :  
Հինգերորդ՝ երբոր պուրակնել մեր չաճութեանը  
կամ մեր օգուտին համար մեր ընկերին կեանքը  
վտանգի մէջ կըձգենք , կամ զօրութիւնն ունե-  
նալով կըպահանջենք իր մէն անանկ բան մը ը-  
նել՝ որնոր զինքը կըկորսընցունէ : Ա եցերորդ՝  
երբոր կըգրգռենք ուրիշները իրարու բարկա-

նալու և վրէժինդիր ըլլալու , ու կըկայնինք քու վերնին կընայինք անոնց իրար խածնելը փառատելը : Եօթներորդ՝ երբոր բուն մեր կեանքը կըկորսընցունենք . ինչպէս ոմանք հրացանով ինքրգինքնին կըմեռցունեն , ուրիշները ինքըզինքնին կըկախեն կամ կըխղգեն , ուրիշները ինքըզինքնին կըսպաննեն անառակութեամբ ուտելով և խմելով և ուրիշ չարութիւններով :

3. Աս Պատուիրանքը պաշելու համար նախ սորվեցէք յարդել կեանքը Աստուծոյ մարդուս տրւած ամենապատուական պարգևին պէս , բաց ՚ի հոգիին փրկութենենէն : Երկրորդ՝ սիրեցէք ամէն մարդիկը , և համբերեցէք ու յաղթեցէք բոլոր բարկութիւնները՝ ոխակալ կիրքերը՝ երբոք կըսկըսին . և զսպեցէք ձեր յօժարութիւնները : Երրորդ՝ փախէք բարկասիրտ ու ոխակալ մարդոց ընկերութենէն , որոնք մեծ ու պատուական բան մը կըսեպեն նախատինքի չի համբերելը , հապա անոնցմէ վրէժ առնելը : Չորրորդ՝ խոնարհ ու հանդարտ հոգի մը ստանալու ջանացէք . հպարտութիւնը , բարկութիւնը և ինքնահաւանութիւնը իրենցմէ ետքը հակառակութիւն ու մահ կըբերեն : Հինգերորդ՝ շատ աղօթեցէք Աստուծոյ ասանկ բնաւորութեան մը համար , Վրիստոսի բնաւորութիւնը , որն որ խիստ ցանկալի և փառաւորեալ հոգի է . աս է երջանկութիւն ու խաղաղութիւն . բայց բարկութեան ու վրէժինդրութեան հոգին թշուառութիւն է ինքիրմէն , որն որ Չառլին հոգին է :

4. Իշարկացող ու վրէժինդիր մարդիկը պարտին ապաշխարել և Աստուծմէ նոր սկզբ իւ ինդրել . թէ որ չէ բնաւ չի պիտի պատրաստըմին Երկնից թագաւորութեանը համար , որնոր արդարութիւն և խաղաղութիւն է : Աեր Փրկիչը խաղաղութեան թագաւոր է :

Եօլուներորդ Պատրիարքանութեաւ :

Առաջ . Է . 1—27 :

- Պ . Ի՞նչ է եօլուներորդ Պատրիարքանքը :
- Պ . “ Հ նութիւն մի՛ ըներ ” :
- Լ . Առաջին կարգը վող մարդիկը որո՞նք  
էին :
- Պ . Արամ ու Եւան :
- Պ . Ո՞րին ձեռքովը կարգը վեցան :
- Պ . Տէր Աստուծոյ ձեռքովը : Յօհանու . թ .  
18—25 :
- Ն . Յանի՞ չոգի մէկտեղ միաւորվելու կար-  
գը վելու են :
- Պ . Ո՞խայն երկու մէկը մարդ ու մէկալ կնիկ :
- Առաջն . ժթ . 1—9 : Առաջ . ժթ . 2—12 : ան-  
կազմն . է . 2 :
- Ն . Ո՞եր առաջին ծնողացը կարգը վելը օրի-  
նակ է՞ր մի ուրիշ ամէն կարգը վողներուն :
- Պ . Արամերես :
